

3087

3088

3089

271

11-99



2000



271  
mu-99



ԹԻՖԼԻՍԻ Ս. ՍՏԵՓԱՆՈՍ

ԿՈՒՍԱՆԱՑ ԱՆԱՊԱՏԻ

Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

(պատկերներով)



Կազմեց  
ԽՈՐԷՆ ՔԱՀ. ԽՈՒՑԵԱՆ

11447

Տպ. «Էսպերանտո»  
Թիֆլիս 1914.

53950-11

ՍՈՆՍՓԺՅԱ Ա ԿԱՎՔԻԳ


ԿՏԱՐԱՅԱՆ ՑԱՆԿԱՍԻՈՒՄ

1 5 4 4 3 4 0 5 2 5 8


(Գրքակազմակերպություն)



10-59



Թիֆլիսի կուսանաց ս. Ստեփանոս եկեղեցի



Faint, illegible text, possibly a watermark or ghosting from the reverse side of the page.



Ներկայ մազրապետ Հովհաննէ Թայրեանց  
Հետեւեալ Սարգսիսեան



THE UNIVERSITY OF CHICAGO PRESS

CHICAGO, ILL. U.S.A.

## Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Թիֆլիսի ս. Ստեփանոս կուսանաց Անապատի ներկայ մայրապետ Հովհսիմէ Թայրեանի շնորհիւ լոյս է տեսնում այս գիրքը:

Մայրապետ Թայրեանցը հասարակութեան ծանօթ անձնաւորութիւն է, 1911 թուի հոկտեմբերին մայրապետ ընտրուելով՝ ամեն ջանգ գործ է դնում կուսանաց Անապատը բարեկարգել նիւթապէս և նորա բարոյական հեղինակութիւնը բարձրացնել: Չանասէր Մայրապետի քաղցր ուշադրութիւնից չէր կարող վրիպել այն հանգամանքը, որ մինչև օրս իրենց անապատի պատմութիւնը չէ եղած: Ահա այս թերին լրացնելու համար իմ տրամադրութեան տակ գրաւ իրենց վանքի շատ աղքատիկ արխիւը: Անցեալներում անապատի հետ կապ ունեցող գրութիւններն ու փաստաթղթերն այնքան էլ խնամքով չեն պահուել: Այդ թերի և սակաւաթիւ գրութիւններն ու թղթերն եղան իմ միակ աղբիւրը այս համառօտ պատմութիւնը կազմելիս, որի թերութիւնները համար, յարգելի ընթերցողներին ներողամտութիւնն եմ խնդրում:

Կազմողը:



## ԿՈՌԻՆԿԵՆ ԿԵԱՆՔԸ ՄԵՐ ՄԷՁ

Ճգնաւորական կեանքը կար քրիստոնէութիւնից էլ առաջ, բայց, ինչպէս յայտնի է, առհասարակ ճգնաւորական-կրօնաւորական կեանքը քրիստոնէութեան ժամանակ մի առանձնակի տեղ բռնեց և աւելի ուրոյն կերպարանք ստացաւ:

Քրիստոնէութեան այն աշխարհայեացքը, թէ այս աշխարհային վայելքները ժամանակաւոր են և անցողական, որ մարդուս կեանքը չէ սահմանափակուում միմիայն այս աշխարհային կեանքով, որ երկրային բոլոր բարիքները մարդուս ծառայում են իբրև միջոց երկնայինը ձեռք բերելու, որ ամեն դոյք և ստացուածք մի բարձր բանի պէտք է ծառայեցնել՝ ահա այս հասկացողութիւնից դուրս բերուեց այն եզրակացութիւնը, թէ որքան մարդս զրկի իրեն, որքան չարքաշ կեանք վարի, որքան հեռու լինի աշխարհային վայելչութիւնից, բարիքից և ամեն տեսակ ուրախութիւնից, այնքան աւելի պատրաստ կլինի յաւիտենական կեանքի համար և կամ այնքան

մարդս զերծ կլինի յանցանքից և մեղքեր գործելուց: Այս տեսակի աշխարհայեցողութիւնը, ինչպէս տեսանք, նոր չէր քրիստոնէութեան համար. յոյ՛ փիլիսոփայութեան մի տեսակը վարդապետում էր, որ աշխարհային ամեն մի փառք, ստացուածք, վայելչութիւն մարդուս աւելի են մոլորեցնում, սխալանքի մէջ ձգում, որքան չափաւոր, որքան զրկանքով կեանք վարել այնքան լաւ:

Քրիստոնէութեան մէջ այդ տեսակէտը էական տեղ գրաւեց, որ յաւիտենական կեանք ձեռք բերելու համար պէտք է զանց առնել ամեն ինչ և՛ տուն և՛ տեղ և զնալ Յիսուսի յետեւից: Քրիստոնէութեան Կարապետ Յովհաննէս Մկրտչի անապատի կեանքը ոգևորել է շատ քրիստոնէաներին:

Այսպէս ուրեմն քրիստոնէութեան հետ հայոց մէջ մուտք գործեց նաև կուսական ճգնական կեանքը: Այդ կեանքը մեր մէջ հետևողներ է ունեցել թէ արական և թէ իգական սեռի անձերից: Հայ ժողովրդի քրիստոնէութեան սկզբնաւորութիւնը կապուած է Հռիփսիմեանց և Պայանեանց կոյսերի անունների հետ և պատմութեան մէջ զրանք ներկայանում են շատ զբաղանք փայլուն գոյնով:

Իրանց գործը ոգևորել է շատերին, նրանց կեանքը իդեալ դարձել շատերին, սկսել են նմանուել նրանց, աշխատել են կուսական կեանք վարել, ճգնուել, աղօթել, քրիստոնէութիւնը տարածել:

Անշուշտ կուսական-ճգնական կեանքը ժամանակի ընթացքում, ինչպէս այլուր, Հայաստանումն էլ ստացաւ շատ սխալ ըմբռնումը: Մարդկանցից հեռու, առանձնութեան մէջ երկնայինը ձեռք բերել չէր կարելի. դա հէնց հակառակ էր Քրիստոսի ամենագլխաւոր պատուիրանին, թէ սիրիր ընկերոջդ: Ինչպէս կարող էին ընկերոջը սիրել, քանի որ ճգնաւորները, կուսական կեանք վարողները փախչում էին մարդ արարածից և առանձնութեան մէջ, քարանձաւում, սարի ծերպերում իրենց երջանկութիւնն էին որոնում:

Կուսական կեանքի բուն քրիստոնէական արժէքն ու նպատակը այն է, երբ մարդիկ ապրում են ուրիշի համար, երբ ուրիշի օգուտի համար՝ մոռանում էին իրենց գլուխը. ահա մէկ կամ միքանի մարդիկ առանձնանալով, կտրուելով ժխու կեանքից, կեանքի բազմապիսի հաճոյ և անհաճոյ երևոյթներից, միանգամայն հեռու սովորական հոգսերից ու զբաղմունքներից, վայելքից ու զուարճութիւնից, իրենց ամբողջ ժամանակն անց էին կացնում աղօթքով, երկնայինը, աստուածային ամեն բարիք ձեռք էին բերում այդ ճանապարհով և միևնոյն ժամանակ այդ աղօթքի ու պաշտամունքի հետ ի միասին, իրենց ժամանակը, եռանդն ու ընդունակութիւնը նուիրում էին ուրիշի օգտին, ուրիշին ծառայելու: Սակաւ է այժմ այդպիսիների թիւը, բայց ուրանալ չէ կարելի, որ կան անհատներ, որոնք տարուած են այդ

գաղափարով: Մեր մէջ էլ յատկապէս վանքերն ու անապատները եղել են կրթավայրեր, ուսումն ու դպրութիւն տարածողներ: Իսկ կանանց վանքերը աչքի են ընկել նրանով, որ կոյսերից շատերը լինում էին հիւանդապահ, որբախնամ, բարեգործական-ազգային հիմնարկութիւնների մէջ ծառայող:

Կ. Պոլսի հայ ազգային բարեգործական հիմնարկութիւններից մէկն է Գալֆայեան աղջկերանց որբանոցը, որ հաստատուած է Սրբուհի կոյս Նշան-Գալֆայեանի անդուլ ջանքերով և կտակեց իր ազգին. այդ որբանոցը հիմնադրի անունով կոչուեց «Գալֆայեան ազգային որբանոց երից ամաց ընծայման ս. կուսին»: Մօտ 50 տարի է ինչ գոյութիւն ունի այս որբանոցը որբասէր կոյսերի և ուսուցիչների ջանքերով: Դաստիարակում են հայ որբ աղջկերք և աշխատում տալ նրանց ուսման հետ ձեռագործի և կարուձևի ուսում. որբերին պատրաստում ապագայ համեստ կեանքի: Հիմնարկութիւնից մինչև այսօր 200-ից ավելի որբ աղջկերք խնամել դաստիարակել են: Ներկայումս այդ որբանոցում խնամուում են 70—75 որբեր 5—19 տարեկան:

Կանանց կուսական կեանքը մեր մէջ մուտք է գործել քրիստոնէութեան հետ: Ս. Ներսէս Մեծը արական վանքերից գատ հիմնել է նաև պարսպապատ կուսանոցներ:

Կանանց կուսական կեանքը այնքան էլ ընդհանրացած չէ եղել մեր մէջ հէնց սկզբից մինչև օրս էլ հազուադիւրս երևոյթ է: Այդ է

պատճառ, որ մեր մէջ շատ սակաւ կուսանոց-ներ են եղել և այժմ էլ շատ քիչ են: Ռուսաստանում կայ 2 կուսանոց, մէկը Շուշոււմ 4—5 կոյսերով, իսկ միւսը Թիֆլիսում, որ կոչոււմ է ս. Ստեփանոս կուսանաց անապատ: Սա միշտ աչքի է ընկել իր աւելի բազմաթիւ միաբան քոյրերով: Պարսկաստանում, դեռ Թիֆլիսի կուսանոցից էլ առաջ գոյութիւն է ունեցել, այժմ էլ կայ Ն. Ջուղայում ս. Կատարինէի կուսանոցը սահմանափակ թուով կոյսերով. այս կուսանոցը դարձել է Թիֆլիսի կուսանոցի սկզբնապատճառը, ինչպէս կտեսնենք ստորև:

---

## ԹԻՓԼԻՍԻ Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ԿՈՒՍԱՆԵՑ ՎԱՆՔԸ

Թիֆլիսի կուսանաց անապատն ունի մօտ 200 տարուայ պատմութիւն: Այս անապատը իշխան Բեհբուլթեան տոհմի ջանքերով է հիմնուել: Իշխանական այդ տոհմը եղել է բարեպաշտ, եկեղեցասէր. դրանց նախահայր Ասլանը (նոյն և Սօջա) Պարսկաստանից ընտանիքով գաղթելով Թիֆլիս, քաղաքից դուրս, Հաւլաբար քաղաքամասի մօտ գտնուած հանգստարանում 1655 թուին շինում է եկեղեցի ս. Աստուածածնայ անունով: Այդ եկեղեցին հիմնողի անունով կոչուել է Սօջայի վանք, այնուհետև մինչև օրս էլ այդ հանգստարանը կոչուում է Սօջի-վանք: Իշխան Բեհբուլթեանցները վրաց թագաւորների մօտ խիստ ընդունուած էին. դրանք մեծ ծառայութիւններ են մատուցել վրաց արքունիքին: Դրանցից շատերը հնուց եղել են զինուորական պարսից, վրաց ապա ուսաց բանակներում:

Դրանցից մէկը, վերոյիշեալ Ասլանի (Սօջայի) որդի Մելիք-Աշխար-բէգ Բեհբուլթեանցը Պարսկաստան եղած ժամանակ, Ն. Զուղայում տեսնելով ս. Կատարինէի հայոց կուսանոցը, հաւա-

նում է այդ հիմնարկութիւնն ու գաղափարը և իբրև բարեպաշտ հայ՝ ցանկութիւն է յղանում թիֆլիսում տեսնել նման մի հիմնարկութիւն: Իր այդ ցանկութիւնը իշխան Մելիք Աշխարբէզը յաճախ յայտնել է իր որդոցն ու ծանօթներին: Իշխան Մելիք Աշխարբէզը չէ կարողանում իրագործել իր այդ միտքը: Իբրև զինուորական խիստ զբաղուած էր վրաց, պարսից և տաճկաց կռիւներով: 1724 թուին տաճիկների արշաւանքի ժամանակ սպանւում է այս իշխան Բեհբուլթեանցը և անկատար մնում նրա փափազը: Որդիքը չէն մոռանում հօր կամքը:

Սորա աւագ որդի Մելիք-Աղան, որը պարսից Նապըր Շահի բանակում մեծ հռչակ ստացաւ, վրաստան (թիֆլիս) վերադառնալով՝ իրագործեց իր հօր կամքը: Նոր-Ջուղայի ս. կատարին է կուսանաց վանքից բերել է տալիս 2 կոյսեր: Իշխան Բեհբուլթեանցների այդ ընտանիքը ապրում էր այժմեան Յովնանեան դպրոցի շէնքի տեղը: Մելիք Աղան իրենց բնակարանի մի սենեակ, որը դարձած էր դէպի հարաւ յատկացրնում է այդ 2 կոյսերին, դարձնում նրանց աղօթատուն: Այնուհետև, երբ ճգնական-կուսական կեանքը ոգևորել է մի քանիսին, երբ հէնց Բէհբուլթեանցների օջախից իշխանուհիներ հրապուրուելով՝ կոյս մտան, իշխանները իրենց տան յետևը, Սօլոլակի սարի դոշին կառուցին մի փոքր մատուռ ս. Ստեփանոս Նախավկայի անունով և յատկացրին այդ նորակազմ կոյսելի խմբին, իբրև նրանց առանձին աղօթատուն, իսկ

իրենց ընդարձակ տան մի մասը՝ կոյսերի կացարան: Այնուհետև քարափի վրայ էլի Բենբուլթեանցները կոյսերի համար շինեցին 2 սենեակ մի քանի պատուհաններով:

Ուրեմն այս անապատի սկզբնաւորութիւնը եղել է 1724 թուից յետոյ, իշխան Մելիք-Աշխարբէզի մահից յետոյ, իսկ 1727 թուին արդէն կազմուած էր կոյսերի որոշ խումբ իրենց փոքրիկ մատուռով: Ն. Ջուղայի կուսանոցը համարուում է Թիֆլիսի կուսանոցի սկիզբը: Գայանէ մայրապետը ս. Կատարինէ կուսանոցի մայրապետին մի անգամ նամակ գրելիս, Ն. Ջուղայի անապատը անուանում է մայր և դայեակ իրենց կուսանոցի:

Բենբուլթեանցները համարուելով հիմնադիր այս կուսանոցի, այնուհետև էլ սերնդէ սերունդ, մինչև օրս էլ, դարձրել են իրենց խնամքի առարկայ և հովանաւորել այդ վանքը, ապահովելով նիւթապէս իրենց միանուագ և պարբերաբար նուէրներով:

Կուսանոցի սկզբնական եկեղեցին կառուցել է Մելիք-Աղայի ամուսին իշխանուհի Մարիամը իր Բենբուլթ և Մինիշկար Աղա կամ Մինիշկար Բաշ\*): Հէնց հնուց, մինչև այժմ էլ կոյսերը պատարագին «Գոհութեան» մէջ յիշում են «... և շինողաց սրբոյ եկեղեցոյս հանգուցեալ Մելիք-Աշխարբէզի եւ Մարիամու եւ որդւոց նորին

\*) Աղա և բաշ իշխան Բենբուլթեանցների տիտղոսներն են, շատ անգամ իրար փոխարինում:

Բեհբուլթի եւ Մինիշկար Աղային և որք ընդհո-  
վանեաւ սորին են հանգուցեալ...»:

Կուսական կեանքը գրաւել է շատերին,  
տեսանք հէնց իշխան Բեհբուլթեաններից եղել  
են մի քանի կոյսեր, այլև Թիֆլիսի յայտնի իշ-  
խանական, ազնուական և բուն Թիֆլիսի մեծ  
օջախների գաւակներից եղել են կոյսեր, այս-  
պէս օրինակ իշխ. Բեհբուլթեանց, իշխ. Արղու-  
լթեանց, Բեգթարէդեան, Թամամշեան, Քեթխու-  
դեան, Փիթոյեան և այլն տներից:

Հետզհետէ աւելի և աւելի կազմակերպուել  
է այդ հիմնարկութիւնը: Այդքան յայտնի ըն-  
տանիքներից աղջկերք կոյս մտնելով, իրենց  
հետ տանում էին ապրուստի որոշ միջոց, վա-  
յելում էին իրենց ծնողների ու ազգականների  
քաղցր ուշադրութիւնը. ահա այդ կոյսերը խմ-  
բուելով կազմում են արդէն 10—12 հոգուց  
բաղկացած մի խումբ, մի միաբանութիւն:

Թիֆլիսի կուսանոցի կոյսերը սկզբում ի  
հարկէ ոչ մի եկեղեցական կարգ ու աստիճան  
չեն ունեցել. նրանք միայն աղօթողներ էին, հա-  
ւասար իրաւունքներով, հաւասար պարտակա-  
նութիւններով, բայց քիչ յիտոյ բնականաբար  
յառաջ է գալիս աւագի և կրտսերի հասկացո-  
ղութիւն: Պարզ էր, որ տարիքով մեծ և տարի-  
ներ առաջ կոյս մտածը պէտք է որ աւելի  
իրաւունք և հեղինակութիւն ունենար իրենց  
խմբի նոր անդամների — միաբան բոյրերի նկատ-  
մամբ:

Այսպէս առաջ է գալիս մէկ գլխաւորի, ա-



240-59

ւագի հասկացողութիւնն ու պահանջը: Եւ տեսնում ենք, որ 1730-ական թուականներից այսպէս համեստ կերպով սկսուած այս կուսանոցը՝ 1780-ական թուականներից արդէն ունէր մէկ գլխաւոր, աւագ, իրենց խմբի մեծը, որը կոչւում էր մ'այրապետ:

Կամաց-կամաց Թիֆլիսի կուսանոցում ստեղծուած է որոշ կարգ, կազմակերպութիւն, ներքին կառավարութիւն: Կոյսերի այդ խումբը իրենց նուիրում են աղօթքի, ծովի և ապաշխարութեան. սահմանւում են աղօթքի և ժամասացութեան որոշ ժամեր: Սկզբում մինչև եկեղեցի շինելը, իրենց կեցած տունը և աղօթքի տունն էր. յետոյ իշխան Բեհբուլթեանցները կոյսերի համար յատկապէս մի մատուռ կառուցին իրենց տան կից. օրուայ որոշ ժամերին կոյսերը բարձրանում էին աղօթելու:

Դրանցից շատերը սկզբում գրագէտ էլ չեն եղել. թէ իշխ. Բեհբուլթեանները և թէ միւս ընտանիքները, որոնց աղջիկները կոյս էին գառնում՝ վրացախօս ընտանիքներ էին. համարեա բոլոր կոյսերն էլ խօսելիս ևն եղել միայն վրացերէն: Աղօթքներ, սաղմոսներ, ժամակարգութիւն սովորում էին լսելով. այնուհետև կոյս մտնելուց յետոյ շատերը սկսել են հայերէն գրել կարդալ սովորել: Երջանկայիշատակ Ներսէսը Թիֆլիսում առաջնորդ եղած ժամանակ յաճախ այցելում էր կուսանաց վանքը և ամեն անգամ յորդորելիս է եղել, որ կոյսերը վարժուեն գրագիտութեան մէջ:

Բայց շատ դժուար էր սովորել թէ՛ գրա-  
բար կարդալը, այն էլ պատիւներով գրած ժա-  
մապաշտութեան գրքերը, և թէ՛ նոր սկը-  
սուած աշխարհաբարը, որով կարողանային խօ-  
սել, կարդալ և գրել: Գայանէ մայրապետը, որ  
ամենանշանաւոր մայրապետներիցն էր, իշխ-  
Բեհբուլթեանցներից ամենամեծ օջախի դուստր,  
Զաքարիա վարդապետի նման հմուտ գրագէտի  
ջանքերով վերջ ի վերջոյ հազիւ կարողանում  
էր գրել. այդ հաշուով ի՞նչ կլինէին միւսները.  
մինչև վերջն էլ կոյսերի թւում եղել են ան-  
գրագէտ: Այս պայմաններում ուսման և կրթու-  
թեան մասին խօսք էլ չէր կարող լինել. բայց  
միշտ էլ կոյսերի մէջ եղել է ձգտում սովորելու  
և ամեն անգամ եղել են նախանձախնդիր մար-  
դիկ, որոնք ուշք են դարձրել կոյսերի այս մեծ  
պակասութեան վրայ և աշխատել են այս թե-  
րին լրացնել նրանց հետ առանձին պարապելով,  
այսպէս եղել են Զաքարիա վարդապետ Գուլաս-  
պեանց, Ղազար աւագ քահանայ Դաւթեանց,  
Ալամդարեան, Տէր Ստեփան (պրտիկ) Մանտի-  
նեան և ուրիշները, ինչպէս և վերջերս վախ-  
ճանուած Արսէն ա. ք. Բագրատունին, պարա-  
պել է բացի ընդհանուր գրագիտութիւնից նաև  
կրօն, պատմութիւն:

Յայտնի չէ թէ սկզբում ինչպէս էին ըն-  
տրուում կամ նշանակուում մայրապետներ: Ամե-  
նայն հաւանականութեամբ այդ հարցի վերջնա-  
կան լուծումը վերապահուած էր իշխան Բեհբու-

թեանցներին, իրենց ուզած կոյսերին աշխատում էին մայրապետ կարգել:

Նկատելի է, որ սկզբում միատեսակութիւն չէ եղել այդ հարցի նկատմամբ: Մարիամ մայրապետը նշանակում է այսպէս. 1801 թուին Յովսէփ Արղութեան կաթողիկոսը գրում է Մարիամ կուսին. «... ընկալեալ զխնդիր ձեր հրամայեցաք հոգևոր կառավարութեանն տեղւոյս և վասն ձեր արարաք զկարգադրութիւն, որպէս ունիք գիտել: Արդ և ձեզ ծանուցանեմ այսու, զի գիտացեալ միամիտ լինիջիր: Նախ կացուցանեմ զքեզ ի վերայ կրօնաւորունի կուսանացն մայրապետ ...»: Այստեղից իմանում ենք, որ Մարիամը ինքն է դիմել և խնդրել, որ իրեն մայրապետ նշանակի. Յովսէփ Արղութեան նորահաստատ կաթողիկոսն էլ առաջուց ծանօթ լինելով կոյս Մարիամի հետ՝ կատարում է նրա խնդիրը և մայրապետ է կարգում: Ուրեմն առանց ընտրութեան: Իսկ օրինակ Գայանէի մայրապետ հաստատուելու մասին յայտնի է, որ այդ ժամանակուայ առաջնորդ կարապետ եպիսկոպոսը դիմում է կաթողիկոսին, որ մայրապետ հաստատէ. կաթողիկոսի կարգադրութեամբ ս. Սինօղը հաստատում է և տրւում է կաթողիկոսական կոնւակ: Այդ մասին առաջնորդը գրում է նորահաստատ Գայանէին. «Լուսաւորչական հայոց Սիւնհոդոսն էջմիածնի համաձայն միջնորդութեան իմոյ ի 24 յունուարի յանուն կաթողիկոսի ամենայն Հայոց հաստատեալ է զՁեզ ի կուչումն արքասուհւոյ այդր կուսանոցի

առաքեալ է զՀայրապետական կոնդակ»: Առաջնորդը առաջադրում է յաջորդ օրը ամբողջ միաբան քոյրերի հետ ներկայանալ իրեն, ստանալու Հայրապետական կոնդակը, լսելու Սինօզի հրամանի բովանդակութիւնը «ևս և կարևոր խրատուց յինէն աւանդելոց Ձեզ, որպէս վասն ըստ օրինի վարելոյ զՁեր պաշտօն նոյնպէս և նոցա ակնածելոյ ի Ձէնջ իբրու յիւրեանց պետէ»:

Գայանէ մայրապետից յետոյ արդէն որոշ յայտնի է, որ նոր մայրապետի ընտրութիւնը կատարւում է այսպէս. մայրապետի մահուանից որոշ ժամանակ յետոյ թեմակալ առաջնորդը նշանակում է մայրապետի ընտրութիւնը—ընտրութեան նիստին նախագահում է ինքը առաջնորդը կամ նրանից նշանակուած մի ուրիշ հոգևորական անձն: Ժողովին մասնակցում են ձայնի իրաւունքով տեղական քահանան, բոլոր միաբան քոյրերը և իշխ. Բեհբուլթեանցներից 2—3 հոգի:

Մայրապետ են ընտրում Թիֆլիսի կուսանաց անապատի աւագագոյն միաբան անդամին, որը յայտնի է եղել իր համեստ, պարկեշտ կեանքով և վանքին մատուցած ծառայութիւններով: Կազմւում է ընտրական արձանագրութիւն բոլոր ներկայ եղողների ստորագրութեամբ և թեմական առաջնորդը մատուցանում է Վեհափառ կաթողիկոսին ի հաստատութիւն:

Թէ մայրապետի ընտրութեան և թէ վանքի ներքին կառավարութեան համար որոշ կա-

նոնադրութիւն կամ հրահանգ չէ եղել: Ներկայ  
եռանդուն մայրապետ Թայրեանի ցանկութեամբ  
մօտիկ ապագայում պէտք է մշակուի և կազմուի մի  
ներքին կանոնադրութիւն անցեալի աւանդական  
սովորութիւնների հիման վրայ, հաստատել տալ  
վեհափառ կաթողիկոսին և գործադրել:

## Մ Ա Յ Ր Ա Պ Ե Տ Ն Ե Ր

Թիֆլիսի կուսանաց ս. Ստեփանոս Անապատի համեստ սկզբնաւորութիւնից անց 65 տարի տեսնում ենք արգէն, որ այս վանքն ունի մայրապետ. գրաւոր յիշատակարաններ կան, որ տասնևութերորդ դարի վերջը այս վանքն ունի կազմակերուած միաբանութիւն իր Թագուհի մայրապետով. այս տեղեկութիւնը հիմքն ընդունելով այս մայրապետին ընդունում ենք առաջին մայրապետ:

Թագուհին մայրապետ է եղել 1790—1799 թիւը. սրա մասին շատ քիչ տեղեկութիւններ կան: Մայրապետ եղած ժամանակ մեծ մասը ապրում էր Ղզլարում, ենթադրութիւն կայ, որ այդ տեղացի էր: 1796 թուին «Ռուսաց երկրի Հայոց ազգի արքեպիսկոպոս» Յովսէփ Արղութեանցը անցագիր է տալիս Թագուհի մայրապետին, որ սա կոյս իշխ. Բեհբութեանցի և մի քանի ուրիշ կոյսերի հետ Մոզգուկից Ղզլարի վրայով գնան Աստրախան: Թէ ի՞նչու այս խումբ կոյսերի հետ մայրապետ Թագուհին մնում էր շարունակ Ղզլարում և կամ ի՞նչու են գնում

Աստրախան յայտնի չէ: Հաւանական է, 1796 թուի ժանտախտի պատճառով այդ կոյսերը փախել են Ղզլար—Մօզդոկ. այդտեղից էլ անցել են Աստրախան կրկին ժանտախտից խոյս տալու:

Թագուհի մայրապետից մնացել է մի կտակ գրուած նրա մահուան 1799 թուին Ղզլարում, ինքը իբրև անգրագէտ, կտակը կազմել է նորա խոստովանահայր տէր Մելքիսէթ քահանայ Պապեանցը: Այդ կտակից իմանում ենք, որ Թագուհի մայրապետը մի անգամ գնացել է ուխտ Երուսաղէմ, կամեցել է երկրորդ անգամ էլ գնալ, բայց «ի ժամանակս արեկոծութեան և աւերման քաղաքին Թիֆլիզու ի ձեռն անօրէն բռնաւոր Ադա-Մահմետ խանին» չէ յաջողուել: Կտակի բովանդակութիւնից երևում է, որ Թագուհին եղել է ունեւոր կոյս: 150 դարմահմուզ ոսկի կտակում է Երուսաղէմի պատրիարքին, «որ հանդերձ միաբան ուխտիւք իւրեանց պաշտօն պատարագօք յիշեն զհոգի աղախնոյս»: Բացի այս 150 ոսկուց Երուսաղէմի վանքին և միաբանութեան կտակւում է դարձեալ 50 ոսկի, էջմիածնին 25 ոսկի, իր հոգևոր զուտը Փայանէին 15, Թիֆլիսի իր խոստովանահայր տէր Աւետիք քահանային 3 ոսկի: Ղզլարից կտակած այս գումարը իր եղբօր ձեռքով ուղարկում է Թիֆլիս, որ նա ըստ պատկանելեաց յանձնէ: Նոյն կտակի վրայ կայ մակագրութիւն, որ Երուսաղէմի հայոց վանքին հասանելի 200 ոսկին լիովին ստացել է Երուսաղէմի նուիրակ Մկրտիչ վարդապետը: Կտակակատար (վերջի և հոգաբարձու)



Մայրապետ Կատարինէ իշխ. Արղութեան †1898թ.

Մայրապետ Կատարինէ

Handwritten text at the top of the page, partially obscured by the central image.



Handwritten text at the bottom of the page, partially obscured by the central image.

Handwritten text at the very bottom of the page, including what appears to be a signature or name.

նշանակում է պարոն Յովհաննէս Գալստեանին: Թագուհի մայրապետը վախճանւում է նոյն 1799 թուին. ամենայն հաւանականութեամբ Ղզլարում:

Թագուհի մայրապետից յետոյ 6—7 տարի մայրապետութիւն է անում իշխան Սարգիս Ամատունու դուստր Կատարինէն: Սա եղել է ամենաանարժան մայրապետ. կարելի է ասել, որ սա վանքը քանդել է: Եղած կանխիկ գումարները տուել է իր ազգականներին, իր եղբայր նաղվօրնի սօվետնիկ Կարապետին, իր քոյր իշխ. Օսկում Սարգսաղուխա Էնիկօլօփեանցին և ուրիշներին: Ամենքին վանքի կարողութիւնը տալիս էր իբրև իր սեպհականութիւն. պարտամուրհակները գրել էր տալիս իր անունով և ոչ անապատի:

Շատ յաճախ գնում և շաբաթներով մնում էր իր հարազատների տանը. մի խօսքով վանքի հոգսը և կարիքը ամենեկին հարազատ չեն եղել նորա սրտին: Եղած կալուածները բարձի թողի արած՝ քայքայման աստիճանի են հասել. և ահա այսպիսի անհոգ, անսրտացաւ և միանգամայն անարժան մայրապետի օրօք կուսանաց անապատը աղքատանում է: Բեհրութեան իշխանները, որ մի տեսակ հոգաբարձու էին իրենց նախնիքների հիմնած անապատի, որ միշտ էլ իրենց սրտին մօտ էին համարում նրա գործերը՝ այս տարիներում, ինչպէս երևում է, այնքան էլ տեղեակ չեն լինում անցած-դարձածին. իշխ.

Ամատունեանցների հետ բարեկամական կապեր ունենալով՝ չեն նկատել, թէ Կատարինէ մայրապետը այս 5—6 տարիների ընթացքում օր աւուր քանդում է կուսանաց անապատը:

Կուսանոցը այս խառն դրութիւնից ազատողը լինում է Կատարինէ Ամատունի մայրապետի յաջորդ Յուստիանէ Աստուածատրեանց մայրապետը: Այս մայրապետը իր նախորդի հակապատկերն էր. ուրիշ տեսակ վերաբերմունք ունէր զէպի վանքը, տարբեր էր մտածում և տարբեր գործելակերպ ունէր: Յուստիանէն օտի կանգնելից արդէն կործանման գուռը հասած կուսանաց վանքը:

Արժէ որ մի փոքր կանգ առնենք այս արժանաւոր, գործունեայ մայրապետի կեանքի և գործի նկարագրութեան վրայ և տեսնենք, թէ տգէտ լինելով հանդերձ՝ սրչափ նա հաւատարիմ է եղել իր կոչմանը, սրչափ նա նուիրուած է լինում իր խնամքին յանձնուած գործին և թէ ի՞նչպէս նա քաջ գիտէր իր անելիքը:

Յուստիանէն մայրապետ է եղել 33 տարի, 1806—1839-ը: Վանք է մտել Թագունի մայրապետի ժամանակ. եղել է բաւական ունևոր ընտանիքի աղջիկ: Սովորական հացազնից զատ ձեռնադրութեան ժամանակ վանքին նուէր է բերել մի քանի «թուման»: Կատարինէ մայրապետի ժամանակ եղած կարիքները հոգալու համար էլ տուել է 10 թուման. իսկ իր մայրապետութեան հէնց սկզբին իր ամբողջ կարողութիւնը տալիս



Մայրապետ Փեփրոնիա Խուբեան Կ 1904 թ.



*[Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page]*

է վանքին ասելով, ես սեպհականութիւն ունե-  
նալ էլ չեմ կարող:

Ամենից առաջ Յուստիանէ մայրապետը աշխատում է կարգի բերել կուսանաց անապա-  
տի խառն գործերն ու հաշիւները: Մանաւանդ շատ խառն էին, ինչպէս տեսանք, գրամական հաշիւները: Կատարինէն շատերին պարտք էր տուել, շատերին էլ տալիք էր մնացել: Յուստի-  
անէի «զաւթարում» տեսնում ենք վճարուած այս կամ այն անհատին գումարներ «մնացեալ (պարտք) ի Կատարինէ մայրապետէ»:

Այդ Կատարինէ մայրապետի մահից յետոյ (1806 թ.) ստեղծուել էր անել զրութիւն: Յուստիանէին քաջ յայտնի էին իր նախորդի ապողինութիւնները. այժմ ինքը պէտքէ պաշտ-  
պանէր վանքի շահերը, պահանջէր պարտապան-  
ներից, բայց նրանք մերժում են առարկելով, թէ մայրապետը (Կատարինէ իշխ. Ամատունին) մեր քոյրն էր, մեր գումարները եղել են նրա մօտ. մենք էլ նրանից են փոխ առել: Ահա խելացի Յուստիանէն ամեն միջոց գործ է դնում, որ պէսզի չվտանգուին անապատի շահերը: Ինչպէս կտեսնենք, երևում է, որ այն ժամանակուայ առաջնորդ Երջանկայիշատակ Ներսէսը հաւանում էր Յուստիանէ մայրապետի գործելակերպը և օգնում էր նրան այս խառն գործերը կարգա-  
ւորելու:

Մայրապետը իր միաբան քոյրերից առ-  
նում է հաւատարմաթուղթ այդ գրամական հար-  
ցի պաշտպանութեան համար: Եւանդուն Յուս-

տիանէն տակնուվրայ է անում ամբողջ գործը. դիմում է ամենին, առաջնորդին, կոնսիստորին, մարմնաւոր իշխանութեան, մինչև անգամ միջնորդ գատարան է կազմում և ի՞նչ էք կարծում, բանը այնտեղ է հասնում, որ հակառակորդ իշխաններն ու աղաները նեղն ընկած՝ վճարում են կուսանաց անապատի հանգուցեալ մայրապետ Կատարինէին պարտ մնացած բոլոր գումարները: Այսպէս օրինակ Նրեանում պաշտօնավարող մայօր Կարապետից (Կատարինէի եղբայրը) Պետերբուզում ապրող վանեցի Գէորգ Աղայի և վաղարշապատցի Յարութիւն Աստուածատրեանցի շանքերով կարողանում է ստանալ 1200 ռուբլի «ասիզնացի» փող, որը վերցրել էր Կատարինէ մայրապետից:

Բացի դրամական հաշիւները կարգի բերելուց, կանոնաւորում է և վանքապատկան կալուածները: Կուսանաց անապատի ամենահիմնական աղբիւրը, մանաւանդ հնումը, կազմում էին իշխ. Բեհբուլթեանցներից կտակած 3 խանութները, 2 - ը միջի փողոցումը, մէկը ծածկած բազասխանում: Այդ խանութները թողնուած էին անխնամ, կիսաւեր դրութեան մէջ. վարձաւորները կանոնաւոր քրեհ չէին տալիս. հաւաքուել էր 10 տարուայ թագաւորական տուրք:

Յուստիանէ մայրապետը արձակում է անբարեխիղճ վարձաւորներին, նորոգում է խանութները, վարձով տալիս, կամաց-կամաց վճարում տարիների հարկը: Մէյդանի խանութը (այսպէս է գրում Յուստիանէն), որ Կատարինէն



Մայրապետ Յեփրոսինէ իշխ. Աբամելիքեան † 1911 թ.



U. S. Department of the Interior, Bureau of Land Management, Washington, D. C. 20250

գրաւ էր գրել 10 թումանով, թափում է: Կուսանաց անապատը մինչև այժմ էլ Կրժանիսում ունի մի այգի. այդ այգին Յուստիանէն, ինչպէս ինքն է գրում ձեռք է բերել «ահագին զաւիզարով»: Վանքի Օրթաճալի այգում շինել է տալիս քար ու կրէ մառան, հնձան, գնում և գցել տալիս մեծ ընտիր կարասներ. այգու համար շինել է տալիս նոր չարիս քոից շուր հանելու:

Մինչև Յուստիանէ մայրապետը կոյսերը չեն ունեցել որևէ յարմարուոր բնակարան. եղել է մի դարբաս, հանրակացարան, որը եղել է և սեղանատուն և ննջարան, ահա Յուստիանէն շինել է տալիս փոքր ինչ յարմար բնակարան, յարմար այն ժամանակի համար (1813թ.): Շինել է տալիս անապատի մեծ պարիսպը քարափի կողմից, որ մինչև այժմ էլ կանգուն է: Անշուշտ եկեղեցու նորոգութիւնն ու բարեզարդութիւնը չէր վրիպի այս արիաջան մայրապետի ուշադրութիւնից: Իշխ. Բեհբութեանցների շինած ըսկզբնական մատուռը էլ չէր բաւականանում. միաբանութիւնը մեծացել էր. եղած եկեղեցին ունէր շատ պակասութիւններ: Յուստիանէն շատ էլ ուզենար հիմքից նորոգել չէր կարող, դրա հասար ազատ գումար նա չունէր. հիմքից վերաշինելու բախտը վիճակուած էր Յուստիանէի միանգամայն արժանաւոր յաջորդ Գայանէին: Իսկ Յուստիանէն կարողանում է միայն նորոգել ներսից, սեղանը լայնացնում, պատուհանները բացում. եկեղեցու համար ձեռք է բերում զգեստ:

Այստեղ յիշելու ենք Յուստիանէ մայրապետի մի մեծ առաւելութիւնն ևս, որը նրան աւելի բարձրացնում է մեր աչքում. մինչ նորահախորդ մայրապետները անզրագէտ էին և հարկաւոր դօկումենտի վրայ «ձեռք դնելով» էին եօլա տանում, Յուստիանէն գրագէտ էր. այդ դեռ քիչ է. միայն սրա օրօք կուսանաց անապատի ել մուտքի մասին յիշատակութիւն կայ: Ոչ մէկը նախկին մայրապետներից չեն գրել (չեն գրել տուել) վանքի դրամական հաշիւը:

Յուստիանէն հասկացել է հաշուի կարիքը. մի անգամ, երբ Ներսէս առաջնորդը այցելում է կուսանաց վանքը, նայում մայրապետի հաշիւները, պատուիրում է այնուհետև պահել աւելի կանոնաւոր ձևով, խոստանում է կոնսիստորից ուղարկել հաշուեմատեան:

Առաջնորդ Ներսէսը կազմում է մի մասնաժողով կարգի բերելու կուսանաց անապատի գոյքն ու հաշիւը: Այդ մասնաժողովի անդամները լինում են Մինաս արքեպիսկոպոս, Տէր-Մելքիսիդեկ խաչակիր աւագ քահանան, իսկ Բեհբուժեանց իշխաններից Մելիք Դարչին և Յովսէփ Մինիշկար Բաշին:

Այս մասնաժողովը մայրապետ Յուստիանէի հետ ցուցակագրում և կարգաւորում կալուածական ու դրամական գործերն ու հաշիւները: Յուստիանէ մայրապետը այդ օրուանից սկսում է հաշիւ պահել. Ներսէսի ուղարկած մատեանում գրում է. «չէի տեղեակ դաւթար շինել, մի առ մի թղթերի վրայ նշանակել էի, ետու

(այդ պատճառով) հրամայեց (Ներսէսը), որ օրինաւոր դաւթար լինի. որովհետև մեր յանապատի մէջն դաւթար գրել չէ էլած, միայն ես գրեցի ինչ որ ես կարէի, միայն սրբազանի (Ներսէսի ուղարկած Մինաս Եպիսկոպոսի ցոյց տուած ձևով) գրածն վեր առայ. կարելի է սղալ (սխալ) լինի յիմանողն կիմանայ»: 1806 թուից մինչև 1816 թիւը հաշիւները ունեցել է նշանակած կտոր-կտոր թղթերի վրայ. «այս դաւթարում գուս գրեցի, չեմ յիմանում լաւ իմ գրի թէ ուչ. լաւ գրողն կճանչնէ կիմանայ. ի յօրէ յայնմանէ գրում եմ ինչպէս իսկըս կըտրում է»: Իշխանութիւնից ուղարկած այս հաշուեմատեանում մայրապետը գրել է շատ բան. իր ժամանակ եղած կոյսերի ազգանունները, նրանց վանքը մտած ժամանակը. սրանց ծնողների վճարած հացազինը: Արձանագրում է մանրամասն հաշիւը սննդի և մանր ծախսերի. մինչև անգամ յիշում է, թէ այս ինչ կոյսի համար ինչ զգեստ է կարել և ի՞նչքան ծախսել: Այդ հաշիւներից իմանում ենք, որ նրա ժամանակ տարեկան միջին թուով 10—12 հոգու համար ծախսուել է 20—30 թուման\*):

Ներսէսը, որ այնքան նախանձախնդիր էր կուսանոցի կարգ ու կանոնի, Յուստիանէ մայրապետին ուղղում է մի շարք հարցեր, գրում է

\*) Այս հաշուեմատեանում մինչև 1817 թիւը գումարները նշանակուած են թուման և դիանով (1000 դիանը=1 ը.) իսկ այնուհետև թուման, մանէթ, արասի, շահի, գրօշ:

Չ առաջադրութիւն և պատուիրում պատասխանել: Առաջին առաջադրութեան հարցերը և դրանց պատասխանները ձեռքի տակ ունինք, իսկ երկրորդ առաջադրութիւնը կորած է, բայց կայ մայրապետի գրած ընդարձակ պատասխանը 9 կէտերից բաղկացած:

Ահա մայրապետի այդ Չ պատասխան յայտարարութիւնները բաւական մանրամասն տեղեկութիւններ են տալիս կուսանաց անապատի ել ու մուտքի, նիւթական միջոցների, այլ և ներքին կեանքի և կառավարութեան, այդ պատճառով հարկաւոր համարեցի այդ յայտարարութիւնները ստորև բերել ամբողջապէս:

### ՆԵՐՍԷՍ ԱՌԱՋՆՈՐԴԻ ՈՒՂՂԱԾ ՀԱՐՅԵՐԸ

1. Ո՞րքան արդիւնք մտած են ի վանսդ ամի ամի:

2. Ո՞րքան ծախք լինին վասն ուտելեաց, ըմպելեաց, հանդերձից, վառելեաց և այլն:

3. Քանի՞ այգի ունի վանքդ և քանի՞ կըրպակս, ի ձեռս որո՞ց են այնք, յամին որքան եկամուտս ունին:

4. Քանի՞ կուսանք են ի վանսդ և իւրաքանչիւր կոյս որքան դրամս սւնի:

5. Տարեկան արդիւնք եկեղեցական որքան են:

6. Ո՞րքան արդիւնք ստանայ վանքդ ամբատ ամէ ի սաղմոսերգութենէ կուսանացն ի վերայ ննջեցելոց և յի՞նչ պիտոյացուցանէ զայս:

7. Ո՛րքան անօթք են յաւելեալ յեկեղեցւոջդ յետ վերջին տումարագրութեան և այլն:

### ՄԱՅՐԱՊԵՏԻ ՏՈՒԱԾ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

1. Տարեկան արդիւնք մտանին յանապատս երբեմն 30, երբեմն 40, երբեմն 50 թուման աւել կամ պակաս, որ այս գումար արդեաց ոչ բաւականանայ ի կառավարութիւնս այսքանեաց հոգւոց:

2. Զծախս տարեկան չունիմ նշանակեալ, միայն Դուք ինքնին կարէք կշռել, թէ ի սոյն սղութեան ժամանակի, սրբան ծախս հարկաւոր են:

3. Ունի անապատս գերես այգիս զմինն ընական ինքեան և գերկունս ձեռամբ իմով գնեալ, որոց եկամուտ բացի ծախուցն երբեմն 4, երբեմն 5 և երբեմն 6 թուման, նաև պատահի երբեմն, որ մուտն արդեանց ընդ ծախոցն համահաւասար լինի:

4. Կրպակք երեք. յառաջնում նստի Գապի յանուն այր ոմն, որ տայ յամսէնն քիւրայ մին թուման. յերկրորդ կրպակով նստի Գլախա Բաբանասովն և տայ քիւրայ 5 մանէթ և յերրորդումն վրացի Տէտօն և սա տայ երեք մանէթ և թագաւորական ծախսն ի վերայ իմ հաշուին, մանաւանդ հարկաւորութիւն վերանորոգութեան:

5. Կուսանք անապատիս գումարեալք հանգերձ սպասաւորօք են ըստ հաշուօք 15 հոգիք: Զորս անձինք, յորոց առաջինն հանգուցեալ Մելախուարի դուստր կատարինէ կրօնաւորունի տայ յամսէնն հացագին երկու մանէթ, երկրորդն դուստր պարոն կարապետ Խուբովին նատալիա

կրօնաւորուհի տայ յամսէնն հինգ մանէթ հացազին և հանդերձագին, երրորդն Մարիա զըպրուհին Աբեսալամեանց տայ յամսէնն հինգ մանէթ հացազին և հանդերձագին և չորրորդն Շիօյեանց պարոն Մէլքօի գուստր Սօֆիա զըպրուհին տայ յամսէնն երեք մանէթ հացազին և հանդերձագին: Միւս կուսանացն յայտնի է ի նախկին դաւթարոջ որոց ոմանք ունին գտարեկանն և ոմանք ոչ:

6. Տարեկան արգիւնք եկեղեցւոյ ի յաջահամբուրէ, ի գանձանակէ, ի դոնաբացէքէ հազիւ թէ չորս թուման գոյանայ և ի ճրագալուց զիշերի ջրօրհնեաց ի տունս բարեկամաց մերոյ յասելոց զխորհուրդ մեծ, որոց գումար արդեանց բացի բաժանելոց միաբանից, լինի ընդամենն եօթն թուման աւել կամ պակաս:

7. Ի սաղմոսերգութենէ ի վերայ ննջեցելոց, տարեկան արգիւնք երբեմն 8, երբեմն 10 թուման և երբեմն աւելի կամ պակաս:

8. Զկնի վերջին տումարագրութեանս յաւելեալ գոն յանապատիս մին ժամաշապիկ և մին եախլուխ:

Զայս ամենայն արգիւնս տարեկան պիտոյացուցանեմ ի վերայ այսքանեաց միաբանից, ի վերայ եկեալ հիւրոց, ի վերայ այգեաց և կրպակաց, ի վերայ ուտելեաց, ըմպելեաց, զգինելեաց և վառելեաց, նաև ի վերայ շինութեան և պայծառութեան սրբոյ եկեղեցւոյս: Եւ այսքանեօք արդեամք հազիւ տանիմ ի դուրս ըզտնտեսական կառավարութիւն: Որովհետև այժմ պակասեալ են արգիւնք, զորս ստանայեաք յառաջնում ժամանակի ի յարդեանց յառաջընթացութենէ մերմէ ընդ սգաւոր կանանց ի գերեզ-

մանատունս, և ի գանձանակէ, որք սահմանեալ  
գոյին յամենայն եկեղեցիս:

1828 թ. դեկտ. 5

### ՅՈՒՍՏԻՍՆԷ ՄԱՅՐԱՊԵՏԻ ԵՐԿՐՈՐԴ ՅԱՅՏԱ- ՐԱՐՈՒԹԻՒՆԸ ՆԵՐՍԷՍ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ

1. Սովորաբար օրէնէ հարցաքննել ի սկզբն  
Աստուածային հարսնախօսութեանս յոր ստի-  
պեալ ուրուք ի սիրոյն Աստուծոյ բարեհաճի  
ածել զորդի իւր աստ ի հարսնացուցանել ընդ  
անմահ փեսային Քրիստոսի: Թէ արդեօք ունի՞  
զբաղաբաւարութիւն և զպարկեշտութիւն. ար-  
դեօք ի քաղցրաբարութիւնս է սնեալ լրջմտու-  
թեամբ: Յնրպիսի գործ մարգեալ են զնա առա-  
ւել ի հոգևորն, թէ ի մարմնաւոր: Ծնողք նո-  
րին ևս ունի՞ն զբաւական ազնուութիւն բարուց:  
Ի մանկութիւնէ են ուխտեալ զնա Աստուծոյ,  
թէ վասն այլոց իրաց կամ պատճառաց. եթէ  
գտանին այսոքիկ յօրիորդ կոյսն, որ հանդեր-  
ձեալ է ընդ մեզ միանալ հոգևոր կրօնիւք, ըն-  
դունեմք զնա սիրով և յօժարութեամբ, բայց  
զառաջինն սկսանեմք սակաւ — սակաւ հակեցու-  
ցանել զմիտս նորա ի մեր կրօնաւորութեան կոյս,  
ապա հանգանակեմք փոքր առ փոքր զուսումն  
գրոց Աստուածայնոց՝ որք են օգտակարք և նը-  
պաստամատոյցք առ զիւտ յաւիտենական կե-  
նաց և Աստուածահաճութեան, այնքան՝ մինչև  
հասուցանեմք զնա ի կատարելութիւնս որով, և  
արժանանայ փութով հանդիսանալ ի ստացումն  
սրբոյ աստիճանի աւագ սարկաւազութեան:

2. Միաբանութիւնն լինին առ հասարակ  
անձինք իբրև հնգետաւան, յաւէտ քան զայս

ոչ ընդունի անապատն բազմացուցանել զթիւ,  
մի վասն անձկութեան բնակութեան, երկրորդ՝  
վասն անխարզախ և խաղաղ կենօք պահպանու-  
թեան և կառավարութեան ընդ միմեանս. ըստ  
որում յայլ և յայլ ազգէ և սերնդոց են ծնունդք,  
զի որդիք, եթէ որք են, ի միոջ յանկողնոց՝ չեն  
նոքա ի կատարեալ միաբանութեան և ի սէր.  
ուրեմն ուր թողցուք զայնպիսիսն, որք են օ-  
տարածինք սիրով և կրթիմք և բարւոք կրօ-  
նաւորութեամբ միանալ և կառավարիլ թարց  
շփոթ և անկարգութեան:

3. Իւրաքանչիւր ոք ունի ըստ կարեաց  
իւրոց բերեալ դրամ ապրուստ ինքեան ի ծնո-  
ղաց իւրոց: Են ոմանք որք ի սկզբն մտից իւ-  
րեանց բերին ընդ ինքեանս, են որք ի ժամա-  
նակս ձեռնադրութեան, և են որք ամ յամէ ի  
տարին հատուցանեն զերկու թուման հացազին  
միայն և զհանդերձիցն ինքեանք իսկ հոգան:  
Իսկ որք զուրկք գտանին յայսոսիկ ապրուստից,  
որոց ծնօղքն նախապէս խոստացել են տալ  
զբավականութիւն և չունին կարողութիւն՝ վը-  
ճարելոյ, խնամէ զնոսին ինքն մայրապետն  
յարգեանց անապատիս և ունևոր կուսանաց ընդ  
որով իշխանութեամբ է ամենայն արդիւնք և  
մուտք անապատիս, նաև զդրամս կուսանաց,  
որոյ զամենայն զպակասութիւնսն հոգայ նոյն  
ինքն, թէ վասն ուտելեաց և թէ զգեւելեաց:  
Որպէս մուտ արգեանց, նոյնպէս և ծախք թէ ի  
վերայ շինութեան և պակասութեան եկեղեց-  
ւոյն, թէ ի վերայ տանն, թէ ի վերայ այգեաց  
և թէ ի վերայ կրպակաց անապատին. հիւան-  
դանայ ոք ի կուսանաց՝ որք ունին զդրամս,  
պահպանէ զնոսա դարձեալ մայրապետն առ-  
նելով ծախս ի դրամաց անտի ի վերայ բժշկաց  
և դեղօրէից:

4. Իրամատէր կոյսն, եթէ ենթարկեալ է ընդ լծով սարկաւազութեան, չունի իշխանութիւն ոչ ինքն և ոչ այլ ոք յընտանեաց իւրոց սեփականել վերստին ինքեան կամ ձեռնամուխ լինել թէ ի կենդանութեանն և թէ յետ մահուանն, այլ մինչ է կենդանի կառավարի այնու, իսկ յետ վախճանելոյն ըստ օրինի թաղեալ զնա ի դրամոց անտի իւրոց, ժառանգէ զմնացեալ մասն անապասն առանց դաւաճանութեան ուրոք և եթէ չէ ընդ լծով, նոյնպէս է և նա ըստ վերոյ գրելոցն ի կենդանութեանն, իսկ զկնի մահուանն զկէս դրամոց նորա վերադարձուցանէ առ ծնողսն և կիսովն առնէ զծախս թաղման հանգուցելոյն. ապա թէ ոք գտանի ի միաբանութեանց ուստի յապստամբութիւն և պահանջեսցէ զիւրն, զորս չէ տեսեալ մեր զայսպիսի բնաւ, զնորա ի բաց հանեալ զեկեղեցականութեան կարգ արտաքսէ տնտեսութեանն անապատիս աշխարհական զգեստիւք և անհնար է միւս անգամ մուծանել զնա ի ներս:

5. Որ կամի երթալ ի տուն հօր իւրոյ կամ բարեկամաց իւրոց վասն հարկաւոր գործոց կամ իրաց, առնու նախ նա զհրաման ի մայրապետէն. նկատէ մայրապետն յայնժամ թէ է օրինաւոր երթալն թոյլ տայ նմա չափաւոր միջոցաւ, ապա թէ ոչ, արգելու զնա զելանել յանապատէ և նա չկարէ համարձակիլ առանց գիտութեան առանձին իմն նեղութիւն կամ այլ ինչ պակասութիւն. յառաջ յայտնել պարտէ կամ մայրապետին, թէ զանց արասցէ նա, ապա միաբանիցն, իսկ թէ նոքա ևս չօգնեսցեն, յետ այնորիկ վայել է կրօնաւորութեան նորա տանել վշտացն լուծեամբ, և եթէ չկարէ ժուժել եր-

կար, յայնժամ իրաւունքն ոչ արգելէ նմա յայտնել հոգևոր կառավարութեանն միայն զցաւս իւր առանց այլ և այլ գայթակղեցուցիչ իրաց. չէ մարթ այնպիսին, յառաջ քան ազգել մայրապետին կամ միաբան կուսանացն ազդ առնել հոգևոր կառավարութեանն ըստ մերոյս ծիսի և կանոնի, որում իսկ պարտաւորի յայնժամ:

6. Հասարակ է խնամքն ի վերայ ամենեցուն, բայց եթէ ոք առաւել քան զընկերս իւր պսակեալ է քաղաքավարութեամբ և պարկեշտութեամբ, քաղցի և համեստակրօն բարուք պճնազարդեալ և երկիւղածութեամբ Աստուծոյ զինքն մշտապէս զգեստաւորեալ է օրինակ այլոց լինելով, մայրապետն գայնպիսին ունի յառանձին իմն պատուի և ի խնամածութիւնս, է որ ի ծածուկ, է որ յայտնի շահեցողութեամբ հանդերձ, իսկ պատիժ այնոցունց, որք պարտաւոր գտանին յինչ ինչ կրօնս մեր ըստ իւրոց յանցանացն թեթևագոյն օրինական խրատէ զնոսա մայրապետն. եթէ է մեծատունից մեղաց պարտապան, մտանի նա հոգևոր կառավարութեանն և անտի ենթարկի ըստ արժանեացն ի ներքոյ ծանր ապաշխարութեան:

7. Իւրաքանչիւր ոք ջանաց լինել արի և արթուն ի գործս բարիս զգաստ ի չարեաց, սիրեն առաքինի ընթացիւք իւրեանց անել զանուն ամբժութեան. եթէ զիպիցի ինչ և իցէ խռովութիւն չնչին իմն պատճառաւ, փութով հաշտին ընդ միմիանս, մինչ չևէ լուեալ մայրապետն. փոյթք առանձնական աղօթից սոցա կախեալ է ըստ իւրաքանչիւրոցն կամաց և յօժարութեան, յայսմ բռնադատութիւն չիք, բայց ի հասարակացն՝ յառնեն կանխաւ յարշալոյսն առաւօտու անխռով կամօք, սուրբ սրտիւ և խոնարհ երկրպագութեամբ կա առաջի սրբոյ սե-

դանոյն երգելով զսաղմոսն ընկեր առ ընկեր ըստ կանոնադրութեանց իւրաքանչիւր եկեղեցին սկսանի առաւօտեան ժամերգութիւնն հասարակութեան ծնրադրութեամբ հանդերձ կից և զճաշուն վասն հաճոյից ժողովրդեանն, յետ վրձարման այս ժամերգութեան քաղեն զմնացեալ սաղմոսն. ապա ելեալ զաղօթն ի բերանս իւրաքանչիւրքն մտանին ի սենեակս իւրեանց զառաւօտեանն նախ տալով զողջոյն մայրապետին, յետ որոյ սկսանին զձեռագործս իւրեանց առնել երբեմն, որոց շահաւէտութիւնն և զօգտութիւն ի ձեռս իւրաքանչիւրոցն է անարգել և երբեմն դեգերեն յընթերցմունս սուրբ գրոցն, ունի զնոսա յայնժամ մայրապետն ակնածութեամբ ի ծածուկ: Առանց աղօթից և ժամերգութեանց չկարէ որ մնալ. բայց թէ ոչ վասն հիւանդութեան կամ այլ պատշաճաւոր պատճառի: Սենեակի նախապատիւ կուսանոցն են առանջինն առանձին, իսկ միւսոյն հասարակութեամբ:

8. Ի հասարակել աւուրն պատրաստի ճաշն ի դահլիճի սեղանատան նախապէս և ապա մտտեալ միաբանիցն մայրապետաւն հանդերձ կանգնին շուրջ զսեղանովն հացի յիւրաքանչիւր տեղիս մինչ ցօրհնեսցեն. ապա նստեալ պարկեշտութեամբ անմոռնչ ձայնիւ վայելեն զհացն հասարակութեան թարց՝ խտրանաց կերակրոց մեծի և փոքու, կերակուրն հանդերձի ըստ պատշաճի աւուրց, է որ երկու տեսակ, է որ երեք, է որ աւելի կամ պակաս, նոյնպէս ևս և ամենայն ինչ է հասարակ մեծի և փոքու յորժամ ի կիր առնումք:

9. Իսկ յերեկոյին դարձեալ սկսանին ըստ սովորութեան ընդհանուր եկեղեցեաց զժամերգութիւնն, ապա զխաղաղականն և ի վճարել

հասարակ աղօթքիցն երգեն զութերրորդ սաղմոս «ի նեղութեանն», նոյնպէս զոյգ ընդ զոյգ, իսկ ի լինել զիշերոյ աւարտեալ նոյն տեսակ զհացկերութիւնն մաղթեն միաբան «գեկեացէ»ն և զկնի սիրով ողջունեալ զմիմեանս առանձնանան ննջել արթնութեամբ և խոհեմաբար լինելով և ի քունն չափաւոր և ոչ զգիշերն ողջոյն:

Աշխատաւոր Յուստիանէ մայրապետը 1838 թուին հիւանդ էր. նա ստացաւ հոգեկան հիւանդութիւն, նրան պահում էին փականքի տակ. խելագարութիւնն երբեմն խիստ էր արտայայտուում: Մի անգամ լուսաբացին փախել էր վանքից բոբիկ գնացել Նորաշէն, հազիւ կարողացել են ետ բերել: Ահա այդպէս էր տառապում կուսանաց անապատի ամենասրտացաւ և գործ կատարած մայրապետը: Սորա հոգեկան հիւանդութիւնը կարող էր կապ ունենալ այն հանգամանքի հետ, որ իր նախորդ կատարինէ մայրապետի աջ ու ձախ բաժանուած զումարները կորչում էին, միայն մի մասը կարողացաւ ստանալ. ամբողջ ժամանակ վէճով էր զբաղուած թէ հանգուցեալ մայրապետի եղբօր և թէ նորա քրոջ ամուսին Ննիկօլոֆեանի հետ. իր մայրապետութեան շրջանի ահագին մասը թէ մարմնաւոր և թէ հոգևոր իշխանութեանց շեմքը մաշեց վանքի շահերը պաշտպանելով:

Բացի այս խառն դրութիւնից նրա վրայ

կարող էր ազդել նաև անապատի ներքին խոռ-  
վութիւնները: Տեսանք, որ 1796 թուից Թագու-  
հի մայրապետը մի խումբ կոյսերի հետ գնա-  
ցել էր Ղզլար, նա այնտեղ էլ մնաց երկար ժա-  
մանակ և այնտեղ էլ վախճանուեց: Այս մայ-  
րապետի մահից յետոյ կոյսերը դեռ էլի մնում են  
Ղզլար քաղաքում. Չ անգամ դիմում են Ռուսաց  
Աղէքսանդր Ա. կայսեր խնդրելով, որ իրենց օ-  
ժանդակութիւն տրուի Թիֆլիս վերադառնալու.  
բաւական ուշ, երբ արդէն սրանք վերադար-  
ձած են լինում Թիֆլիս՝ Պետերբուրգից գրաֆ Կա-  
չուբեի միջոցով հարցում է լինում, որ այդ կոյ-  
սերը Ղզլարից եթէ դեռ չեն կարողացել վերա-  
դառնալ ամեն հնարաւորութիւն տրուի նրանց  
Թիֆլիս գալու: Յովսէփ Արղութեանը նոր կա-  
թողիկոս դարձած Ռուսաստանից Ղզլարով անց-  
նելիս (դեռ կոյսերը այդտեղ էին) իմանում է  
մայրապետի (Թագուհի) մահը, այստեղ եղած  
20 հոգի կոյսերը խնդրում են իրենց հաժար,  
ուրեմն և Թիֆլիսի ս. Ստեփանոս անապատի  
համար, մայրապետ կարգէ Մարիամ անունով  
կոյսին: Ամեայն հաւանականութեամբ սա իշխ.  
Բեհբութեանցների տանիցն էր. այնուհետև սը-  
րան տեսնում ենք շատ մօտ բարեկամ իշխան:  
Բեհբութեանցների հետ և սրա միջոցով Եփրեմ  
կաթողիկոսը, իշխան Բեհբութեանցներին (որոնց  
անուանում է մայրապետի ազգական), օրհնու-  
թիւն և հայրապետական ողջոյններ է ուղարկում:  
Այսպէս 1801 թուին այս Մարիամ կոյսը Յով-  
սէփ Արղութեան կաթողիկոսից կարգւում է

Թիֆլիսի ս. Ստեփանոս անապատի մայրապետ,  
Ղզլարում 1801 թուին տալիս է հայրապետա-  
կան կոնդակ:

ժամանակով մայրապետ Մարիամը իր խում-  
բով գալիս է Թիֆլիս, երբ արդէն կատարին է  
Ամատունի մայրապետից յետոյ՝ Յուստիանէն  
Բայազետցի Դանիէլ կաթողիկոսից հաստատուել  
էր մայրապետ և ընկած էր վանքի շահերի յե-  
տևից: Սկսւում է հակառակութիւն այդ երկու  
մայրապետաների մէջ: Ամեն մէկը զբանցից ու-  
զում էր առաջինը, հրամայողը և կարգադրողը  
լինել: Նա էլ կաթողիկոսից հաստատուած, միւ-  
սին էլ:

Յուստիանէի կողմը բարոյապէս ուժեղ էր.  
արդէն մի քանի տարի մայրապետութիւն էր ա-  
րել, որոշ գործեր կատարել, անապատը և անա-  
պատի եկամուտները կարգաւորել. սրան պաշտ-  
պանում էր այդ ժամանակուայ առաջնորդ Ներս-  
էսը. իսկ մայրապետ Մարիամը ուժեղ էր իր  
ուժեղ, ազդեցիկ բարեկամներով ու ազգական-  
ներով: Սրա հետ խիստ մօտ բարեկամ էր Նիֆ-  
րեմ կաթողիկոսը: Ներսէսի առաջնորդութիւնից  
առաջ յօգուտ կուսանաց անապատի Թիֆլիսի ե-  
կեղեցիներում շրջեցնում էին գանձանակ, Ներս-  
էսը աւելի յարմար է համարում, գանձանակի  
փոխարէն, իշխանների մէջ հանգանակութիւն  
անել տարէնը 1—2 անգամ մեծ տօներին: Ինչ-  
պէս երևում է այդ հանգանակութիւնը այնքան  
էլ յաջողութիւն չէ ունեցել: Ծերունի Մարիամ  
մայրապետը միւռոնօրհնութեան հանդիսին էջ-

միածին գնացած ժամանակ, եփրեմ կաթողիկոսին խնդրում է վերականգնել հին կարգը և Թիֆլիսի հայոց եկեղեցիներում՝ կուսանաց անպատի կարիքները համար գանձանակ հաստատել, կաթողիկոսը յարգում է մայրապետի խնդիրը և այդ իմաստով առաջնորդին կոնդակ գրում: Իսկ երբ իմանում է կուսանոցի ներքին խռովութիւնները 2 մայրապետների մէջ, թէ առաջնորդին և թէ Մարիամ մայրապետի պաշտպան Բեհբուլթեան իշխան Մինիշկար Բաշի ազայ Յովսէփին կոնդակներ և նամակներ է գրում\*) և կարգադրում, որ ներքին խռովութիւնները վերջացնեն, մխիթարեն ծերունի և ծառայած, ժրագլուխ Մարիամ մայրապետին. «ոչ ապաքէն գա օրհնեալ ծերունին մայրապետն, թէ ըստ հասակին իւրոյ և թէ ըստ բազում աշխատանացն ի վերայ այն սուրբ Անապատին և թէ ըստ այլ բարեմասնութեան հանգամանացն, զորս լաւ զիտեմք ի վաղուց ի լինելն մեր անդ ուսաստուն, ապա զի՞նչ է պատճառն կամ զի՞նչ անվայելչութիւն գոյ, որ չկամին զմայրապետութիւն դորին, եթէ զօրեզ պատճառ ինչ գոյ և կամ անտեղութիւն ծանուսջիք մեզ (գրում է իշխանին) գրով իգիտել, եթէ ոչ այդպէս տրրամութեամբ և յուսահատութեամբ ի գերեզման իջուցանել զգա, արդարև մեծ մեղք է այնոցիկ, որք պատճառ լինին... Զայս ամենայն գրեցաք,

\*) Եփրեմ կաթողիկոսի կոնդակները և թէ նամակները ինքնաձեռագիր են. գրելիս է եղել բաւական վարժ:

զի խնայելով ի ձերութիւնս զորին և յաշխատանս և յարժանաւորութիւնն հաստատեցեն զգայելի րում մայրապետութեան, եթէ ոչ ծանուցեն մեզ պատճառ ոչ կարելոյն»։ Նոյն իմաստով առաջնորդին էլ կոնդակ է գրում։

Բայց Մարիամ մայրապետը շատ էր ծերացել և ուժից ընկել. մեռնում է և ֆնում միայն Յուստիանէն։ Ահա այս վերոյիշեալ ներքին վէճերն ու խռովութիւններն էլ կարող էին ազդել նաև Յուստիանէի առողջութեան վրայ և նպաստել նորա կեանքի վերջին տառապանքներին։

Մայրապետի հիւանդութեան ժամանակ գործի գլուխ են անցնում կուսանաց անապատի կարող և ձեռնհաս անձնաւորութիւններ, այն է Գայիանէ իշխ. Բեհբութեանց, Քրիստինէ Թամամշեանց, Հովիսիմէ Բէզլթաբէզեանց և Մարիանէ Փիթոյեանց կոյսերը, որոնք զիմում են հոգևոր իշխանութեան և խնդրում են անել հարկաւոր կարգադրութիւն. նախ՝ մտածել հիւանդ մայրապետին տեղաւորել որևէ տեղ, իրենք անապատում չեն կարողանում պահել, շատերին ծածում է և կամ կծում, վախենում են կրակ ձգել վառել և երկրորդ՝ խնդրում են սրբազան առաջնորդից կարգաւորել անապատի գործերը։ Գոյքը և կառավարութիւնը յանձնել 2—3 միաբան քոյրերին մինչև մայրապետի բժշկուելը կամ նոր մայրապետի ընտրութիւնը։

Առաջնորդ կարապետ արքեպիսկոպոսը հրամայում է գործակալին կնքել մայրապետի պահարանը։ Ապա որոշ ժամանակ անցնելուց

յետոյ՝ ներկայութեամբ կոնսիստորի անդամի և մարմնաւոր իշխանութեան ներկայացուցչի բաց են անում, ցուցակագրում ամեն ինչ: Այդ տարին 1839 թուին վախճանուում է Յուստիանէ մայրապետը:

Յուստիանէն ունենում է իր արժանաւոր յաջորդ յանձին մայրապետ Գայիանէի: Սա իշխան Բեհրութեանցների ամենամեծ և յայտնի ընտանիքի զաւակն էր. սորա պապն է հաստատել կուսանաց անապատը:

Գայիանէն յայտնի իշխ. Յովսէփ Մինաշկար Բաշու գուստրն էր. կոյս է մտել Կատարինէ իշխ. Ամատունու մայրապետութեան ժամանակ 1799 թուին, 14 տարեկան հասակում: Ինչպէս տեսանք Բեհրութեանցները շատ բարեկամական յարաբերութիւն ունէին կուսանաց անապատի հետ, բայց յատկապէս այս իշխ. Յովսէփ Մինիշկար Բաշու օջախը խիստ մտերիմ էր անապատի հետ: Կուսանոցը համարում էին իրենց ընտանիքի մի մասն, իրենց տանից (այժմեան Յովնանեան Դպրոց) մինչև կուսանոց՝ առանձին ճանապարհ և դուռ էր բացուում. կոյսերը ոչ մի բանի պակասութիւն չէին զգում: Բացի այն կալուածական նուէրներից որոնցով համարեա ապահովում էր վանքը, այդ Յովսէփ իշխանը, ինչպէս Յուստիանէն է գրում իր դաւթարում «Երբեմն երբեմն բռնով հաց և այլ մասնաւոր նուէրներ էր տալիս»:

Ահա այդ օջախը իրենց ամենաապիգ իշխանացն փափկասուն ազգական նուիրում է կուսա-

նաց անապատին փոքր հասակից, որ ապացոյց է նրանց կրօնական—բարեպաշտական զգացման և այն սիրոյ, որ նոքա տաժում էին այս կուսանոցին: Անշուշտ որևէ կրթութիւն չունէր Գայիանէն. երբ վանքը մտաւ, մինչև անգամ չգիտէր կարգին հայերէն խօսել:

Այստեղ պէտք է յիշել, որ իշխ. Բեհբու-թեանցները սկզբից եղել են վիրախօս, նրանց մէջ մինչև օրս էլ հայերէն խօսողները գեղեցիկ բացառութիւններ են. մի տարբերութիւն, միայն սկզբում դրանց մէջ նկատուում էր աւելի ազգասիրութիւն, վիրախօս լինելով հանգերձ, սիրում են իրենց ազգային եկեղեցին, քան վերջերս. մինչև անգամ նրանցից շատերը ուռւ և վրացի աղջիկ առել և իրենց աղջկերքը տուել օտարին և այդպիսով իրենց կալուածական ժառանգութիւնն էլ շատ Բեհբութեան իշխաններից անցել է օտարազգիներին:

Կուսանոցն էլ վիրախօս էր նրանց պէս. սկզբի շրջանում կոյսերը բացառապէս վրացախօս են եղել և յետոյ վանքում նոր սկսել հայերէն թէ խօսել և թէ գրել—կարդալ սովորել: Ծնողների կամ մայրապետների ջանքով ժամանակի ձեռնհաս քահանան նրանց հետ պարապել է թէ լեզու և թէ ժամակարգութիւնը:

Գայիանէ իշխանուհին վանք մտնելով այդպէս փոքր հասակից կամաց-կամաց հմտանում է եկեղեցու ժամակարգութեան կարգ ու կանոնի, սկսում է սովորել հայերէն իրենց ազգական էջմիածնի միաբան Զաքարիա վարդապետ Գու-

լասպեանցի աջակցութեամբ: Ինչպէս երևում է սրանից մնացած մի քանի նամակներէից, այս վարդապետը (յետոյ արքեպիսկոպոս) եղել է բաւական հասկացող, հայերէն լաւ իմացող և գեղեցիկ գիր ունեցող. սա Գայիանէին ուղղած նամակներէ մէջ սովորական ողջոյնի խօսքերից յետոյ գրում է. «Ձոյգ ընդ բանիս խնդրեմ վըտակցաբար և հրամայեմ հայրաբար, զի փոյթ ունիցիս պահել զուսման քո հանդէս, զոր շընորհիւ տեսոն ուսար առ ի մէջ, զպատուական ասեմ արհեստ քերականութեան. ջանալով օր քան զօր աւելացուցանել զշնորհս ի վերայ շնորհացդ»:

Բայց անշուշտ հայերէն սովորելը դժուար էր, որ կարողանային գրաբար հասկանալ, հասկանային և նոր սկսուող աշխարհաբարը, թէ խօսէին և թէ գրէին:

Այս Ձաքարիա վարդապետը 10—11 տարի անց իր նախկին աշակերտուհի Գայիանէին գրում է. «Ինձ այնպէս թուի, թէ չե ևս հմտացաք Դուք հայկաբանութեան, կամ հմտացեալ, սակայն դանդաղութիւն զձեզ պատեալ պաշարեալ ունելով՝ ոչ թէ թողու գրել առ իս զձէնջ զլուսաբանութիւն, որում ցանկամ մինչև յոյժ: Արգէն լուարուք ինձ, և ես ասացից զձեր օգուտն և միանգամայն զվայելչականն. եթէ ցարդ ևս չիցէք հմտացեալ, կարող էք առ իս յաճախ գրութեամբ ձերով օր քան զօր ծանօթանալ նմա, որով զօգտութիւն ընդունել: Իսկ եթէ գիտէք ըստ կարի գրել և դանդաղիք ի նմին, սթափե-

ցարուք այսուհետև և առնաբար արիացեալ՝ գր-  
րեցէք առ իս գրչաւ առն զուարճացուցանել  
չեմ սերտ. զի այս իսկ է վայելչականն»:

Գայիանէն աչքի է ընկել իր համեստ և հեզ  
քնաւորութեամբ. նրան յիշողները անուանում  
են պարկեշտութեան տիպար:

Շուտով դառնում է Յուստիանէ մայրա-  
պետի աջակից ընկեր. իսկ մայրապետի մահու-  
անից յետոյ եղածների մէջ իբրև աւագ, այլ և  
իբրև ձեռնհաս և միևնոյն ժամանակ «մեծ Բեհ-  
բութենց» ազջիկ, անուանի եղբայրների տէր  
(Վասիլ, Գրիգոր, Դաւիթ) ընտրում է մայրա-  
պետ և 1840 թուի մարտին, դրանց օջախին  
շատ մօտ բարեկամ Նփրեմ կաթողիկոսը հաս-  
տատում է մայրապետ: 35 տարի նա մայրա-  
պետութիւն է անում: Ինքը իբրև յայտնի ըն-  
տանիքի զաւակ, բարեկիրթ և համեստ՝ բարե-  
բար ազգեցութիւն է ունենում միաբան քոյրե-  
րի վրայ, այնպէս էր տարել իր գործը, որ ա-  
մենքը մայրապետից քաշւում — պատկառում  
էին: Շատ զգոյշ և բժախնգիբ էր նոր կոյս ըն-  
դունելիս. 14 տարեկանից բարձր կոյս չէր ըն-  
դունում. «Ես իմ աղաթը չեմ կոտրի, ասում  
էր նա, ես 14 տարեկան եմ էկի, միւսներին էլ  
14 տարեկան պէտք է ընդունեմ»: Գայիանէ  
մայրապետը կապեր ունէր Թիֆլիսի բարձր շր-  
ջանի հետ — ամենամօտ յարաբերութիւն և ծա-  
նօթութիւն ունէր Նփրեմ, Ներսէս և Գէորգ Գ.  
կաթողիկոսների հետ, վերջինից ստացել էր պար-  
գև խաչ ս. Գայիանէի մասունքով:

Մայրապետը 2 անգամ ս. Էջմիածին է գր-  
նացել ուխտ: Այստեղ հարկաւոր է յիշել, որ  
առհասարակ թէ մայրապետներ և թէ միաբան  
քոյրերը սովորութիւն են ունեցել ուխտ գնալ  
ս. Էջմիածին և Երուսաղէմ և իրենց առատ  
նուէրներ տարել թէ փողով և թէ եկեղեցական  
անօթներով ու զգեստներով:

Գայիանէ մայրապետը Էջմիածնին նուէր է  
բերել թանգարժէք ոսկեթէլ ամպհովանու ծած-  
կոց, եմիփորոն, արծուենիչ գորգ, որոնց համար  
Բարսեղ արք-եպիսկոպոսը շնորհակալութիւն յա-  
յտնելով գրում է. «զի ի բազում ամաց հետ է  
չէ որ ուրեք երբէք ձեռնամուխ լեալ յայգօրի-  
նակ արժանավայել նուիրագործութիւն»: Այս  
կողմից Թիֆլիսի կոյսերից աչքի է ընկնում  
սարկաւազունի Կատարինէ Դորդանեանցը: Սա  
1862 թուին ուխտ գնաց Երուսաղէմ իր հետ  
տարաւ թէ դրամական և թէ այլ նուէրներ,  
տեսնելով Երուսաղէմի հայոց վանքը զգեստների  
պէտք ունի, վերագարծին կէտ նպատակ է գը-  
նում յաջողեցնել մի նոր ուխտագնացութիւն ա-  
ւելի առատ նուէրներով. կարողանում է իրա-  
գործել: 2 տարուց յետոյ նորից գնում է Երու-  
սաղէմ և այս անգամ տանում է 36 հատ միա-  
տեսակ, ոսկեթել շուրջառ, արծաթէ ոսկեզոծ  
չափրաստներով. մի քանի արծաթէ կանթեղներ  
և աշտանակներ, մէկ ոսկէ կանթեղ և այլ իրեր:  
Պատրիարքը շնորհում է կոյս Կատարինէին  
փոքրիկ ոսկէ խաչի մէջ ամփոփած կենաց փայ-  
տի մասունքը: Երուսաղէմ ուխտ են գնացել,

բացի ներկայ մայրապետ Թայիրեանից, նաև Թագուհի և Մարիամ մայրապետները:

Գայիանէ մայրապետի զեղեցիկ գործերից մէկն է կուսանաց եկեղեցու հիմքից նորոգութիւնը. այս մայրապետի նախնիքների շինած մատուռը հնացել էր, դարձել էր միանգամայն անհամապատասխան. սկզբում քանի սակաւ էր կոյսերի թիւը լի ու լի բաւական էր այդ մատուռը, այժմ արդէն փոքր էր և անյարմար: Գայիանէն վաղուց մտածում էր եկեղեցու վերանորոգութիւնը իրագործել: Միշտ կասէր. «Աստուած, չմեռնեմ, մինչև ես տեսնիմ մեր եկեղեցին շինած»: Եւ Միմէօն ծերունու նման հասնում է իր փափագին: Ի հարկէ արգելքը նիւթականն էր: Վանքը միջոցներ չունէր, ինքը մայրապետի ձեռքն էլ չէր հասնում: Վարչաւայում վախճանւում է Գայիանէի եղբայր գեներալ լէյտենանտ Գաւիթ Օսեփիչ իշխ. Բեհրութեանը, որ իր քոյր մայրապետին կտակում է 7,000 ըուբլի: Այս իր անձնական ամբողջ գումարը դնում է եկեղեցու շինութեան համար, մի այդքան էլ Մուզնու եկեղեցուց պարտք է վերցնում: Իսկ հիմնարկութեան հանդիսին մայրապետի ազգականներն ու բարեկամները, ինչպէս և ուրիշները դրամական նուէրներ են բերում յօգուտ եկեղեցու շինութեանը: 1871 թուին արդէն կառուցուած պատրաստ էր նոր եկեղեցին: Եկեղեցու արևմտեան պատի վրայ զբսից կայ հեռեեալ արձանագրութիւնը:

«Այս եկեղեցի յանուն Նախավկային սուրբ

Ստեփանոսի նախապէս շինեալ էր Մէլիք Մինիշ-  
քարբէզ իշխան Բեհրութեանց ի 1728 ամի գոր  
հնութեան և փոքրկութեան պատճառաւ նորոգե-  
ցին ի հիմանց 1868 ամի ի 19 մայիսի օրինա-  
ւոր ժառանգներն նորա ի 5 և 4 սերնդոց յեր-  
ջանիկ թագաւորութեան կայսեր Ռուսաց Աղէք-  
սանդրի Բ, ի փոխարքայութեան Մեծ Իշխան  
Միխայիլ Նիկօլաևիչի, ի հայրապետութեան ա-  
մենայն հայոց Գէորգայ Դ. յառաջնորդութեան  
վրաստանի Մակարայ արքեպիսկոպոսի, ի մայ-  
րապետութեան Գայիանէի, յազգէ իշխան Բեհրու-  
թեանց: Հոգաբարձու շինութեան էր ստատակի  
սօվետնիկ իշխան Միքայէլ Արսէնեան Բեհ-  
րութեանց»:

Գայիանէ մայրապետը արդէն շատ էր ծե-  
րացել. իրա սրտի ցանկութիւնը կատարած հան-  
գիստ վախճանուեց 1875 թուին 90 տարեկան  
հասակում: Մահուանից մի տարի առաջ կազմեց  
իր կտակը, որով նախօրօք մաս հանելով իր հա-  
ւատարիմ աղախիններին, իր ամեն ունեցածը  
կտակում է վանքին. խրատուել էր նախկիննե-  
րից և ստիպուած իր կտակի մէջ գրում է. «ոչ  
ոք յազգականաց իմոց ոչ ի հեռաւորաց և ոչ ի  
մերձաւորաց չունի իրաւունս տարածանելոյ զօր  
և իցէ պահանջ»:

Միաբան քոյրերն էլ շատ սրտացաւ և հա-  
ւատարիմ վերաբերմունք են ցոյց տուել զէպի  
եկեղեցին ու նորա բարեգարգութիւնը:

Նկեղեցու շինութեան ժամանակ կոյսերից

մի քանիսը իրենց ծախքով կառուցել—նորոգել են եկեղեցու այս կամ այն մասերը: Ստորև առաջ ենք բերում եկեղեցում եղած զանազան արձանագրութիւնները, որոնցից երևում է կոյսերի ջանասիրութիւնն ու քաղցր վերաբերմունքը դէպի իրենց նոր կեանքի օջախի բարեգորգութիւնը:

Չ ա խ ս ի ւ ն ի վ ը ա յ

«Շնորհիւ Տեանն Աստուծոյ ամենակալի ես սարկաւազունի Հռիփսիմէ Բէգթաբէզեանց զործակից մայրապետի կուսանաց Տփլիսայ կանգնեցի զքարեայ սիւնս սրբոյ տաճարիս իմով արդեամբ ի յիշատակ ինձ և ծնողաց իմոց և կոյս Նունէ Բաբանասեանցի զոր ընկալցի տէր ի հաճոյս իւր ամէն, 1870 թ.»:

Ա ջ ս ի ւ ն ի վ ը ա յ

«Յիշատակ այս իմոյ արդեանց քարասիւնս սրբոյ Ստեփանոսի տաճարիս կուսանաց անապատի ընիկ միաբան աւագ սարկաւազունի Աստուծասէր կոյս Յեփրոսինէ զուստը Միքայէլ:

Արեւմտեան սիւներից մէկի վրայ

«Աբիմէլիբեանցն յիշատակ ինձ և ծնողաց իմոց զոր ընկալցի տէր ի հաճոյս իւր ամէն 1870 թ.»:

«Լուսացման աւագանս այս շինեցաւ սեպհական արդեամբ բարեպաշտօն դպրոհւոյ Աննայի Խօջամինասեանց ի յիշատակ իւր և ծնողաց իւրոց ի 1870 ամի»:

Հարաւային պատուհան

«Բարեպաշտօն աւագ սարկաւագուհի Գալիանէ Հախնազարեանց ի յիշատակ իւր և ծնողաց իւրոց ի 1870 թ.»:

Ա լ ա գ ա ն

«Սուրբ աւագանս այս շինեցաւ սեպհական արդեամբ բարեպաշտօն դպրոհւոյ Սօփիայի Ամատունւոյ ի յիշատակ իւր և ծնողաց իւրոց: 1870 ամի»:

Կոյս Խարազեանցի հայր Զալիբէզը իր դուստր Շուշանիկի ձեռնադրութեան օրը եկեղեցում տեսնելով ահագին բազմութեան նեղութիւնը՝ իր ծախսով շինում է եկեղեցու վերնատունը, իր նորընծայ սարկաւագուհի դուստր Շուշանիկի անունով, այդ վերնատան վրայ կայ հետեւեալ արձանագրութիւնը:

«Մանուկ տիս ի սէրդ բացի, ո՞վ Փրկիչ. Լեզուս թոթովեց Անունդ՝ Արարիչ.

Եւ աչք զվերինդ տեսեալ զանմահ Յոյս՝  
Ես քեզ ուխտաւոր ընծայեցայ կոյս:

Դուստր Խարազեան Ես Զալիբէզի

Ի քաղցր յիշատակ սիրասուն ծնողի,  
Կանգնեմ վերնատունս յայս ս. տաճարի,  
Ի փառս փեսայիդ իմ Երկնաւորի.

Կուսան ուխտաւոր զՍարկաւազս Շուշան  
Հարսըն նուիրեալ գրէ քեզ արժան:»

1885 թ. սեպտ. 18

Կուսանաց վանքը հարուստ է եկեղեցական  
սրբազան անօթներով և զանազան սրբոց մա-  
սունքներով, ինչպէս օրինակ ս. Լուսաւորչի,  
Կենաց փայտի, ս. Կոյս Գայիանէի, ս. Կոյս Հը-  
ռիփսիմէի, ս. Ստեփանոս Նախավկայի, ս. Թով-  
մա առաքեալի: Մասունքները արժաթէ ու ոս-  
կէ տուփերի և խաչերի մէջ են ամփոփուած,  
մի քանիսները զարդարուած արժէքաւոր քարե-  
րով: Այդ մասունքներից մի քանիսը նուէր են  
կաթողիկոսներից և երուսաղէմի պատրիարքնե-  
րից զանազան մայրապետներին: Ամենայն հա-  
ւանականութեամբ հէնց սկզբից այս վանքի հիմ-  
նարկութեան օրից այստեղ ունեցել են ս. Ստե-  
փանոս Նախավկայի Աջի մասունքը, որի անու-  
նով և կառուցուել է այս անապատը:

1810 թուին վանքի միաբան քոյր Կոյս Թե-  
կղի Դաւթեանի եղբայրը իր հանգուցեալ հօր  
Յօհաննու և մօր Մարիամի յիշատակի համար  
ս. Ստեփանոսի մասունքի համար շինում է ար-  
ժաթէ աջ իսկականի մեծութեամբ ոսկեզօծ 10  
- 12 ֆունտ ծանրութեամբ, վրան ս. Ստեփա-

նոս Նախավկայի պատկերով: Թեկզի կոյսը, որ տարէն 2 թուաման հացադին էր տալիս ազգականներին այս գեղեցիկ ընծայի շնորհիւ՝ անապատը ազատում է այդ տուրքից:

Այդ բոլոր մասունքների համար կատարինէ մայրապետը շինել է տուել արծաթէ տուփ և այդ բոլոր մասունքները մէջն ամփոփել:

Կուսանաց վանքի եկեղեցին հարուստ է և գանազան սրբոց և տէրունական պատկերներով արծաթապատ՝ շրջանակներով. այդ պատկերներից մի քանիսը հին են տախտակի կամ կտուփ վրայ իւզաների, դրանք նուէր են մեծ մասով նախկին միաբան բարեպաշտ քոյրերին:

Թիֆլիսի կուսանաց վանքը իր բարեգարգութեամբ և որ գլխաւորն է իր մաքրութեամբ կարող է օրինակ լինել Թիֆլիսի բոլոր հայ եկեղեցիների համար:

Կուսանաց անապատը առաջները աւելի հեղինակութիւն և հռչակ էր վայելում. և դա շատ բնական է, այժմեան հասկացողութիւնը տարբեր է և տարբեր վերաբերմունք ունին դեպի այդ օրինակ հիմնարկութիւնները, մի դար առաջ, որ այս հիմնարկութիւնը բարձր շրջանի դուստրների համար էր, այժմ դժուար թէ այդ տեսակներից որևէ մէկը ցանկութիւն ունենայ մտնել վանքը և ճգնուել:

Առաջները շատ մեծ է եղել կուսանաց վանքի բարոյական նշանակութիւնը: Անհնադանդ որդոց մանաւանդ աղջկերանց երբեմն յանձնում էին կոյսերին, որ նրանց անմիջական հսկողու-

Թեան նրանց ձեռքի տակ ուղղուին, ինչպէս որ առաքելական շրջանում կոյսերին էին յանձնում անհնազանդ կանանց և աղջկերանց խրատելու, այգպէտ էլ շատերը կարևոր գէպքերում իրանց աղջկերանց բերում էին կուսանաց վանքը ժամանակաւորապէս, կոյսերի բարի և առաքինի կեանքի ու նիստ ու կացի ազդեցութեան տակ ուղղուելու :

Այսպէս 1845 թուին կարապետ եպիսկոպոսի առաջնորդութեան ժամանակ, Փիթոյեանցների մի աղջիկ ծնողներին շատ էր վշտացրել, տանը անհնազանդ վարժունք էր թոյլ տուել. առաջնորդը իմանալով այդ, զիմում է կուսանաց վանքի մայրապետին և տսում. «օրիորդ Փիթոյեան համարի յանցաւոր անհնազանդութեամբ ծնողաց, որոյ վասն բազում պատուիրանք են ի հին և ի նոր կտակարանս և որպէս ի ժամանակս առաքելոց յանձնէին կուսանաց խրատել զկանացս, նոյնպէս և յիշեալ օրիորդն տուաւ ի դաստիարակութիւն խոհական զգոնութիւն Չերոյ, զի դուք ծանուցիք նմա զերկիւղն Աստուածային, որ վասն անհնազանդ որդւոց և այնու ածջիք ի հնազանդութիւն մօր իւրոյ»:

Առաջնորդը պատուիրում է մայրապետին «տանել և զնա ընդ Չեզ յեկեղեցի, ըստ որում է քրիստոնեայ, և այնպէս թէ յեկեղեցւոջ և թէ յառանին կրթել զնա յերկիւղ տեառն ցառանձին տնօրէնութիւն»:

Բացի զրանից որբ և անտէր աղջիկներին առնում էին իրենց հսկողութեան տակ. Գայիա-

նէ մայրապետը Ջուղայի ս. Կատարինէ կուսանոցի մայրապետին պատասխան նամակի մէջ ի միջի այլոց գրում է. «անտերունջ որբ աղջկունք ոմանք եթէ իսպառ մնան անխնամ գտանին ինքեանց ժամանակաւոր ապաստարան ի վնաս կուսանաց, յորոց ոմանք ի մտանեւն յամուսնութիւն ընդունին ի կուսանոցէն և զչափաւոր զօժիտ»:

Կուսանաց եկեղեցին իբրև վանք ծխական եկեղեցի չէր կարող լինել. չունի առանձին ծուխ. թէև Թիֆլիսեցիներից մի քանիսը կապուած են եղել այս եկեղեցու հետ և զրանց հովուել կուսանոցի քահանայ, բայց զրանք համարուում են ծուխ այն եկեղեցու, որի միաբան քահանան պատարագներ է մատուցում կուսանաց եկեղեցուս: Սկզբից մինչև 1801 թուականը, այս եկեղեցում պատարագ չէ մատուցուել և քահանայ չեն ունեցել. Արղութեան Յովսէփ կաթողիկոսը, երբ Մարիամին մայրապետ է հաստատում, կարգադրում է, որ կոյսերը Թիֆլիսի քահանաներից որևէ մէկին ընտրեն պատարագներ անելու. ահա այդ օրուանից մինչև օրս էլ կուսանոցը ունենում է քահանայ:

Այսպէս ծխական եկեղեցի չլինելով՝ ծխական ժողովներ կամ ընտրութիւններն էլ չէ լինում այդտեղ:

Վանքի կալուածներն ու գոյքը կառավարել են մայրապետները 2 աւագադոյն և ձեռնհաս կոյսերի հետ. այս 3 հոգին միասին կազմում են վանական կառավարութիւն: Քայանէ մայրապետի ժամանակ ունեցել են և երեցփոխ, բայց

ոչ այն մտքով, ինչպէս միւս եկեղեցիները ունենում են ընտրովի երեցփոխներ. մայրապետի առաջարկութեամբ առաջնորդը կամ կոնսիստորը նշանակում էր մէկին այդ պատուաւոր պաշտօնը վարելու՝ մայրապետին աջակցելու գլխաւորապէս կալուածական հարցում:

Բեհբուլթեանցներից մի քանիսը եղել են երեցփոխ (հոգաբարձու), որոնք ամեն ջանք գործ են դրել իրենց պապերի հիմնած անապատի միջոցները բարւոքել և կարգաւորել: Վանքը ունեցել է և անբարեխիղճ երեցփոխ, ինչպէս օրինակ Ն. Նազարբէգեանցը, որը բացի կուսանաց եկեղեցու սեպհականութեան մօտ 10,000 ըուբլուց, մի քանի կոյսերի անձնական գումարներն իսկ վասնել է: Վերջերս աւելորդ է համարուել ունենալ երեցփոխ. վանքի ել ու մուտքը և գոյքը կառավարում է մայրապետը իր Ձ միաբան քոյրերի հետ և ամեն տարի վիճակային կանսիստորիային հաշիւ ներկայացնում:

Վանքի նիւթական գրութեան մասին գաղափար տալու համար ասենք, որ ամեն մի կոյս վանքը մտնելիս բերում է հացագին կոչուած որոշ գումարը իր կարողութեան համեմատ. այս գումարի որոշ մասը դառնում է վանքի սեպհականութիւն: Այսպիսով տարիների ընթացքում կազմւում է մի գումար, որի տոկոսը վանքի մշտական աղբիւր է: Բացի սրանից կուսանոցը ունեցել է բաւական թուով բարերարներ, որոնք զանազան ժամանակ գումարներ են կտակել: Այդ բարերարների մէջ

աչքի է ընկնում Բախչի Խալաթեանցը, որ կուսանոցին կտակել է մօտ 45 հազար ռուբլի: Ինչպէս իր տեղում ասացինք, կուսանոցն ունի 3 խանութ Բեհբուլթեանցներից կտակած, այլ և 2 այգի: Բացի վերոյիշեալ մշտական եկամուտից կուսանոցն ունենում է և պատահական եկամուտ, ինչպէս օրինակ յուզարկաւորութիւններին հրաւիրուած կոյսերի ստացածի որոշ մասը, իրենց եկեղեցու մօմի արգիւնքը և դանձանակը: Անցեալներում կուսանոցն ունեցել է դրամական կորուստներ, ինչպէս օրինակ Ծովեանեանների բանկի սնանկանալով կորցրեց մօտ 12 հազար ռուբլի, երիցփոխ Նազարբեգեանը իւրացրեց մօտ 10,000 ռ.:

Դառնանք կրկին մայրապետների յաջորդականութեանը և նրանց կատարած գործերին:

Գայիանէ Բեհբուլթեանի մահից յետոյ մայպետ է ընտրւում Հռիփսիմէ Բեգթաբէգեանցը՝ Իվանէ Դիմիի աղջիկը, որ մօտ մի տարի մայրապետութիւն արաւ, ունէր հրաշալի ձայն՝ 70—80 տարեկան հասակումն էլ դպրութիւն էր անում, ստեղի և մեղիդիներ երգում: Կոյսերի մէջ հայերէն լաւ իմացողը սա էր: Սորանից յետոյ շատ կարճ ժամանակով մայրապետ եղաւ Նփեմիա իշխ. Բեհբուլթեանցը, Յովհաննէս Բեհբուլթեանցի դուստրը (մօտերս վախճանուած իշխ. Արսէնի քոյրը):

Սորա մահից յետոյ մայրապետութեան թեկնածու էին Կատարինէ իշխ. Արղութեանը և Փեփրոնիա Խուրեանցը: Վերջինս խիստ հակա-

ուակ էր Կատարինէի մայրապետութեանը՝ առարկելով թէ նա այստեղի միաբան չէ, ձեռնադրուել է Սանահնում, իսկ ինքը 7 տարեկան հասակից վանք է մտել: Բայց Կատարինէ իշխ. Արղութեանը ընտրուում է մայրապետ, քանի որ, թէև Սանահնումն էր ձեռնադրուել 1836 թուին, բայց շատ վաղուց տեղափոխուել էր և կուսանաց վանքի միաբան եղել, բացի դրանից ունէր ազգեցիկ ազգականներ և ծանօթների մեծ շրջան:

Կատարինէն մայրապետութիւն արաւ 1877 — 1898 թուականը. բնաւորութեամբ մեղմ, խաղաղ և համեստ էր: Նորոգում է կոյսերի բնակարանը, կտուրը թիթեղով ծածկում և հիմք դնում կուսանոցի գրադարանին:

Սա իր ծախքով մեծացնում է կուսանաց եկեղեցու գաւիթը Յովնանեան դպրոցի կողմից, շինում է բազի երկաթէ վանդակը և երկաթէ մեծ դուռը, որի վրայ կայ հետևեալ արձանագրութիւն. «Կառուցան դրունք և վանդակապատ պարիսպ գաւթի տաճարիս սրբոյն Ստեփանոսի Կուսանաց Անապատին Տփխիսայ արդեամբ և ծախիւք Աբբասուհի մայրապետ աւագ սարկաւազուհի Կատարինէ կուսի Երկայնաբազուկ իշխան Արղութեանց ի յիշատակ հոգւոց ի տէր հանգուցեալ եղբարց իւրոց իշխանազն Յովսէփայ և Միքայէլի ի 17-ն օգոստոսի յամի 1885 Տփխիս»: Կարողանում է վերջացնել Մուղնու պարտքը: Սորա յորդորմամբ իր եղբայր իշխ. Յովսէփ Արղութեան — Երկայնաբազուկը, Սօլօլակի իրենց մեծ

քարուկրեայ տունը կտակում է Ներսիսեան Դպրոցին: Մի բիւրեղեայ ընտիր ջահ է նուիրում ս. Էջմիածնի տաճարին: Իր այսքան օգտակար ծառայութեան համար Մակար Կաթողիկոսը ուղղում է հայրապետական օրհնութեան կոնդակ, ուր ի միջի այլոց ասուած է. «...ախորժելի է Մեզ լսել, զի ժրագլուխ տնտեսագիտութեամբ քով ի սուղ միջոցի գերծաւ մենաստանն կուսանոցիդ ի մեծագումար պարտուց իւրոց, մեծաջան աշխատութեամբ և ծախուք անձնական զբամոց քոց ընդարձակեցաւ գաւիթն և կառուցաւ պարիսպն սրբոյ տաճարիդ. նոյնպէս և յաւելաւ ի կալուածս սրբոյ մենաստանիդ կրպակ մի ևս քոյովք արդար վաստակօք, ազգասիրական ոգւով յորդորեալ զհարազատն քո զհոգելոյս իշխան Յսվէֆին Երկայնաբազուկ Արղութեանց՝ կտակել ետուր զքարուկրեայ մեծ տունն ի Սօլօլակի յօգուտ Ներսիսեան Հոգևոր Դպրոցին, որ ըստ ժառանգական իրաւանց քեզ և հարազատաց քոց անկանիւր. թողումք ասել զնուիրաբերութիւնսն, զորս հետզհետէ ընծայեալ ես ազգապարծանք վանօրէից մերոց, չկարեմք չյիշել զբիւրեղեայ մեծ ջահն, զոր ի վերջին աւուրս ընծայեցիր Մեծի Աթոռոյս, որ յամենայն հանդիսաւոր աւուրս ջահափայլի առաջի սրբոյ Անդանոյ Իջման Բանին Աստուծոյ ի յիշատակ անուան քո:

Վասն որոյ և Մեք ի արիտուր այսոցիկ արգիւնաւոր վաստակոց քոց հրապարակաւ յայ-

տնեմք քեզ զգոհականութիւն Հայրական սրտի մերոյ, կարգամք ի գլուխ քո զբազմապատիկ օրհնութիւնն Աստուծոյ...»:

Կատարինէից յետոյ մայրապետ եղաւ Փեփրոնիա Խուբեանցը: Սա էլ թողել է բարի և շընորհալի կոյսի համբաւ: Վանք է մտել 1826 թուին 7 տարեկան հասակում, և է յայտնի Կարապետ աղա Խուբովի գուստը: Օժտուած էր կուսական կեանքին յարմար յատկութիւններով. ժամը 4-ին առաւօտ պատրաստ հագնուած էր, սիրում էր եկեղեցի, վանական կեանքը, կարգ ու կանոնը, ժամերգութիւնը, մի քանի տարի լուսարարութիւն է արել: Խիստ էր և պահանջող, մինչև օրս էլ սրա ժամանակուայ կոյսերը՝ յիշում են նորա խստութիւնները և պահանջը կարգապահութեան և ժամասացութեան վերաբերեալ: Վայ այն կոյսին, որ կհամարձակուէր եկեղեցի իջնել առաւօտեան «տէր զի բազում»-ը սկսած. ինքը արդէն շատ վաղ առաւօտուանից, զեռ լոյսը չծագած եկեղեցումն էր, ուշացողին շատ խիստ կնկատէր, եկեղեցում կանգնեցնում պատժում էր: Փեփրոնիա Խուբեանց մայրապետը վերին աստիճանի աղօթասէր և արիաջան էր, ամեն շաբաթ գիշեր 8 կահուն սաղմոս կքաղէր և հակում կկատարէր: Նրա ներկայութեամբ կոյսերը չէին համարձակուի մի քիչ բարձր խօսել. նրանից ոչ միայն քաշւում — պատկառում էին, այլ և վախենում: Մայրապետ Խուբեանցը լաւ տան կառավարիչ էր, կուսանաց վանքի վրայ ունի մեծ երախտիք: Գայիանէ մայրա-

պետի շինած եկեղեցին գանգակատուն շունէր, Փեփրոնիա մայրապետը իր ծախքով շինել է տալիս այժմեան գանգակատունը:

Մայրապետի կատարած գործերիցն է և իշխ. Բեհբուլթեանցի փեսայ իշխ. Էրիսթովի հետ ունեցած կալուածական վէճը: Այդ իշխանը կուսանոցին կից կալուածք ունի, իրա տան շինութեան ժամանակ ահագին վէճ էր սկսել և կոյսերին շատ էր նեղացնում: Մայրապետ Խուբեանցը հոգևոր իշխանութեան միջոցով կարողացաւ վանքի շահերը պաշտպանել:

Մի քանի անգամ եկել էր վանքական գոյքը ստանձնող տէրութիւնից կարգուած մասնաժողովը: Այդ ժամանակ Խուբեան մայրապետը արդէն շատ ծեր էր 90-ից էլ անց, հիւանդ և անկողնում պառկած: Վերջին անգամ այդ մասնաժողովին կտրուկ կերպով յայանեց, որ ես ոչինչ չեմ յանձնելու, ուզում էք ինձ տարէք Գօլիցինի մօտ ես կասեմ, կամ գնացէք ասացէք նրան, որ դեռ ինձ տարէք թաղեցէք, յետոյ մեր վանքի բանալիքներն ու բլիթները տարէք: Այդպէս մինչև վերջն էլ կուսանոցի գոյքը չյանձնուեց:

Գործունեայ և բարի յիշատակութեան արժանի Փեփրոնիա մայրապետը վախճանուեց խորին ծերութեան հասակում 1904 թուին: Սրան յաջորդեց Յեփրոսինէ իշխանագն Աբամելիքեանը: Սա 13 տարեկանից վանք է մտել և իր ամբողջ կեանքը անց է կացրել շատ համեստ՝ կոյսին վայել նիստ ու կացով: Ծնողներից ստացած իր

ամբողջ ժառանգութիւնն ու իր անտեսած գումարները 20,000-ից աւելի Աբամելիքեան մայրապետը գործ է դրել բարեգործական նպատակով. իր կարողութեան մեծ մասը մօտ 15,000 ըուբլին նա ծախսեց իրենց կուսանաց եկեղեցու վրայ ներսից և դրսից շքեղ նորոգելով:

Այսքան բարութեան, եկեղեցասիրութեան և անձնուիրութեան համար Մատթէոս Բ. կաթողիկոսը հայրապետական գոհունակութիւնն ու օրհնութիւնը յայտնեց, քաջալերեց նրան լանջախաչով և կարգադրեց, որ մահից յետոյ շանասէր Յեփրոսինէ իշխ. Աբամելիքեան մայրապետը թաղուի իր իսկ նորոգած անապատի աւագ դրան տակը առանձին շքեղ պատրաստուած դամբարանում: Յեփրոսինէն վախճանուեց 1911 թուին 77 տարեկան հասակում: Նրա գերեզմանին կից մարմարէ քարի վրայ կայ հետևեալ արձանագրութիւնը.

«Տփխիսի հայոց կուսանաց անապատի ս. Ստեփանոս Նախավկայի անուամբ կառուցուած 1728-ին և նորոգուած 1868-ին այս եկեղեցին նորից նորոգուեցաւ թէ ներսից և թէ դրսից հին հայկական եկեղեցիների ոճով ողորմութեամբ Տ. Տ. Մատթէոս Բ. կաթողիկոսի Իգմիրլեան. Անապատիս մայրապետ Յեփրոսինէ իշխանագն Աբամելիքեանի ծախքով 1910-ին: Այս նորոգութիւնը եղաւ Ն. Կ. Մ. Կովկասի Փոխարքայ Կոմս Ի. Ի. Վարանցով-Իաշկով և թեմակալ առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոս Սաթունեանի օրօք»:

Աբամելիքեանի մահից յետոյ վանքում թէև կային աւելի աւագ միաբան քոյրեր, բայց ամենաձեռնհաս և յարմար այդ կոչմանը համարուում էր ներկայ մայրապետ Թայիրեանցը, որ և 1911 թուի հոկտեմբերին թէ միաբան քոյրերի և թէ Բեհրուժեան իշխանների ներկայացուցիչների ընդհանուր ժողովում ընտրուում է մայրապետ:

1911 թուի հոկտեմբերին, միաբան քոյրերի և Բեհրուժեան իշխանների ներկայացուցիչների ընդհանուր ժողովի հաւանութեամբ մայրապետ է ընտրուում Հռիփսիմէ Թայիրեանցը: Ներկայ մայրապետ Թայիրեանցը բարեգործ Աղէքսանդր Ղազարեան Թայիրեանցի դուստրն է՝ ունևոր և բարեպաշտ ծնողների զաւակ: Հօր ցանկութիւնն էր, որ իրենց փոքրիկ Հռիփսիմէն կոյս զառնայ և կարողանում է ի կատար ածել իր ցանկութիւնը, փոքր հասակից իրենց փափկասուն հըռիփսիմէին յանձնում են Թիֆլիսի կուսանոցին, Գայիանէ մայրապետի անմիջական դաստիարակութեան և հսկողութան տակ:

Ժամանակով կոյս Հռիփսիմէ Թայիրեանցը դառնում է կուսանաց անապատի աչքի ընկնող կոյս, իսկ Յեփրոսինէ Աբամելիքեան մայրապետի մահից յետոյ եղածների մէջ իբրև ամենաձեռնհաս, փորձուած և աշխարհ տեսած կոյս՝ ընտրուում է մայրապետ: Մայրապետ Թայիրեանցը դեռ մայրապետութիւնից էլ առաջ յայտնի է շատ-շատերին որպէս մի բարի, առաքինի և բարեպաշտ մի անձնաւորութիւն, որի սիրտը բարախում է շատերի համար: Սխալ չի լինի ա-

սենք, որ մայրապետ Թայիրեանցը մեր մէջ եղած բոլոր բարեգործական և ազգային հիմնարկութիւնների օգտին ձգել է իր լուծման. որտեղ կարողացել է նորա բարեգործ ձեռքը հասել է և իր կարողացածի չափ ամեն տեղ օգնել: Նորա բարութեամբ բարերարուած են շատ ընտանիքներ և անհատներ. մանաւանդ նա շատ տաք վերաբերմունք ունի դէպի որբերի կրթական գործը:

Մայրապետ Հռիփսիմէ Թայիրեանցը այցելել է Երուսաղէմ ս. Տեղերը, իր հետ տանելով խոշոր գումար նուէր յօգուտ Երուսաղէմի հայոց վանքի: Այսքան իր առաքինի և բարի գործերի համար արժանացել է շատ-շատերի քաղցր ուշադրութեանը: Զանազան կաթողիկոսներից վարձատրուել է լանջախաչով, ականակուռ խաչով, մատանիով, իսկ Երուսաղէմի պատրիարքը շնորհել է շքեղ ոսկէ խաչ կենաց փայտի մասունքով:

Մայրապետ Հռիփսիմէ Թայիրեանցի հոգսերից մէկն է իրենց անապատի կառավարութիւնն ու բարգաւաճումը. իր մայրապետութեան հէնց առաջին ամիսներին իշխան Գ. Գ. Բեհրութեանից անապատի անունով նուէր ստացաւ Ծղնէթ գիւղում մի մեծ հողաբաժին, որի վրայ կարճ ժամանակում, շնորհիւ իր ջանքերի և եռանդի, իր ծանօթ յարգողների աջակցութեամբ կառուցեց այնպիսի մի հոյակապ շինութիւն, իբրև ամարանոց կուսանաց անապատի միաբան քոյրերի համար, որ արժէ առնուազն 12—15 հազար բուրլի: Այդ շինութեան պատին մարմարէ մեծ տախտակի վրայ կայ հետևեալ արձանագրութիւնը.

«Շինեցաւ ամարանոցս ի Ծղնէթ գեղջի վերայ գետնի, զոր նուիրեցին ի սեպհականութիւն կուսանաց վանացն յանուն սրբոյն Ստեփանոսի որ ի Տփլիս բարեպաշտ իշխանն Գէորգ Գ. և իշխանուհի Կատարինէ Ս. Բեհբութեանց ի մայրապետութեան Հռիփսիմէի Թայիրեանց, որ մեծաւ ջանիւ և բազում աշխատութեամբ բարեսէր անձանց և վերադիտութեամբ ճարտարապետին Նիկողայոսի Մաղաթեանց, կառոյց զայս ամարանոց ի վայելումն սիրեցեալքերց իւրոց միաբանից մենաստանին յամին տեսուն 1912, յամսեան օգոստոսի:

Արդ, որք վայելէքդ ի սմա ողորմիս ասասջիք բարերարաց և վաստակաւորաց սորին»:

Գործունեայ, ջանասէր, եռանդուն և փորձառութեամբ օժտուած ներկայ մայրապետը, որ իրենց անապատի պատմութեան լոյս ընծայելուն այսչափ նախանձախնդիր էր, նրա ուշադրութիւնից չի վրիպում և ուրիշ հարցեր, որոնք կապ ունին իրենց միաբան քոյրերի և իրենց վանքի բարեկարգութեան հետ, սկսած ամենակարևորից մինչև ամենաչնչինը:

Շնորհիւ իր մեծ շրջանի, իր մեծ ծանօթութեան, որ ունի Թիֆլիսի ամենաբարձր և ունևոր շրջանի հետ՝ անշուշտ ստեղծում են մի յարմարութիւն, որ այս անապատը նոր ի նորոյ սկսում է իր վրայ դարձնել բարեպաշտ հայ անձանց և առհասարակ հայ հասարակութեան ուշադրութիւնը. նամանաւանդ եթէ իրականանայ շնորհալի մայրապետ Թայիրեանցի ծրագրած այ ն

գեղեցիկ միաքը, որ իրենց անապատում ուզում է հիմնել մի որբանոց, թէկուզ սահմանափակ թուով, փոքրահասակ թշուառ ու որբ աղջիկներ ի համար: Մայրապետը ցանկանում է դրանց սկզբում երթևեկ, այնուհետև, գործին նայած, գուցէ և գիշերօթիկ պահել վանքում, խնամել, հմուտ մէկ վարպետի ձեռքով, կար ու ձև կամ մի որևէ ձեռագործ հիմնաւոր կերպով սովորեցնել, որ որբերը կարող լինել կեանքի մէջ աշխատել: Այս ձեռնարկութեան արգելք է լինում այն հանգամանքը, որ կուսանոցը ամենեւին ազատ տեղ չունի. ֆիզիքայէս տեղաւորելու հնարաւորութիւն չկայ: Բայց աշխատանքն ամեն արգելքների յաղթում է և յոյս կայ, որ պատուելի մայրապետը ի կատար կածի իր վերոյիշեալ գեղեցիկ և օգտակար ծրագիրը, որով կը շահի բարեսէր անձանց աջակցութիւնն ու համակրանքը: Բացի նրանից, որ ամեն մի կոյս առանձին անում է բարիք կամ օգնութիւն կարօտ ընտանիքի կամ որբի, հարկաւոր է, որ անէ ամբողջ միաբանութիւնը միասին, ընկերական միաբանական մի ընդհանուր բարեգործութիւն, բացի անհատականից. որ ինչպէս Ն. Ջուզայի ս. Կատարինէի կուսանաց մենաստանն ունի որբանոց կամ արհեստանոց՝ Թիֆլիսի կուսանոցն էլ ունենայ այդ օրինակ մի համեստ գործ, որտեղ աշխատեն և՛ միաբան քոյրերը, ով ինչով կարողանայ: Մայրապետի քաղցր ուշադրութիւնը հրաւիրում ենք մենաստանի այս թերի կողմի վրայ:

ԹԻՓԼԻՍԻ ԿՈՒՍԱՆԵՑ ՎԵՆՔԸ ԵՒ ՄԱՐԻԱՄԵԱՆ-ՅՈՎ-  
ՆԵՆԵԱՆ ՕՐԻՈՐԿԱՅ ՈՐՍՈՒՄՆԵՐԵՆԸ

Թիֆլիսի օրիորդաց Մարիամեան-Յովնանեան ուսումնարանը բացուում է 1877 թուին: Այդ կալուածքը, որի վրայ այժմ գտնուում է Յովնանեան դպրոցը, ինչպէս տեսանք պատկանում էր կուսանաց մենաստանի հիմնադիր իշխ. Բեհբուլթեանցներին, այդտեղ գետեղուած էր և սկզբնական կուսանոցը, որ յետոյ տեղափոխուեց աւելի յարմար տեղը: Ժամանակով Յովնանեանցները զնում են այդ կալուածքը: Սրանք ևս շատ բարեկամական յարաբերութիւն են ունեցել կուսանոցի հետ և չեն պակասեցրել իրենց քաղցր ուշադրութիւնը, մանաւանդ զպրոցի հիմնադրի կին տիկին Մարիամ Յովնանիսեան Յովնանեանցը: Սա տեսնելով կոյսերի մաքրակենցաղ և աստուածահաճոյ կեանքը, ցանկացել է այդտեղ հէնց կուսանոցին կից հիմնել օրիորդաց մի ուսումնարան, բայց տիկնոջ մահը արգելք հանդիսանալով՝ անկատար է մնում նորա սրտի փափագը: Ամուսինը՝ սաստակի սովեանիկ Ստեփան Յովնանեանցը վճռեց ի յիշատակ իր ամուսնու իրագործել թէ՛ իւր և թէ՛ հանգուցեալ

տիկնոջ ցանկութիւնը: 1876 թուին գրաւոր դիմում է Գէորգ Դ. կաթողիկոսին և յայտնում, թէ ինչպէս իր հանգուցեալ կին Մարիամ Յովհաննիսեան Յովնանեանցը իր կենդանութեան ժամանակ իբրև բարեպաշտ և քրիստոնեա կին խորին կերպով համոզուած էր այն ճշմարտութեան մէջ, որ կրթութեան և մտքի զարգացման հետ զուգընթաց՝ պէտքէ նոր սերնդին մատակարարել նաև կրօնական զգացում: Որ որեւէ դպրոցում մարտը կրօնական զգացում՝ զարգացնելու համար քաւական չէ միայն կրօնի դասերն ու դասատու-թիւնը, այլև սրան պէտք է նպաստէ դպրոցի կերպարանքը (տիպը), նորա ներքին կեանքը, դեղավար մարմնի վերաբերմունքը\*): Ահա հանգուցեալ տ. Մարիամ Յովնանեանը ունեցել է մի փափագ, որ իր անուան նուիրուած ուսումնաբանը լինի Թիֆլիսի կուսանաց անապատին կից և այդ մենաստանի անմիջական հսկողութեան տակ, այդպիսով Աստուծուն և Նորա եկեղեցուն նուիրած մաքրակենցաղ միանձնուհիների ազդեցութեան տակ կրթուին և դաստիարակուեն հայ չքաւոր և որբ աղջկերք: Ստեփան Յովնանեանը յայտնում է կաթողիկոսին, թէ ինձ համար պարտաւորեցուցիչ համարելով իմ հանգուցեալ ամուսնու կամքը և միանգամայն համաձայն լինելով նորա ձգտումների և բարեգործութեան նպատակների, ես նուիրում եմ այժմ Թիֆլիսում գտնուած ու. Ստեփանոս կուսանաց

\*) Ընդգծումը իմս է Խ. ք. Խ.

անսպաստին իմ եռայարկ քարէ տունը իրան կից ազատ տեղով, որը գտնուում է Բեհբուլթեան փողոցում, այդ վանքին կից: Նուիրում եմ այդ տունը կուսանաց վանքին այն պայմանով, որ այդ տան մէջ բացուի օրիորդաց ուսումնարան և ի յիշատակ իմ ամուսնու այդ ուսումնարանը կոչուի Մարիամեան-Յովնանեան ուսումնարան:

Ստեփան Յովնանեանը յարգելով այս, խընդրում է Վեհ. կաթողիկոսին ընդունել այս նուէրը կուսանաց վանքի անունով և անել հարկաւոր կարգադրութիւն ի կատար ածելու իրենց ցանկութիւնը:

Գէորգ կաթողիկոսը ընդունելով այդ կտակը՝ կովկասիկառավարչապետի միջոցով դիմում է ներքին գործոց նախարարին, որը Բարձրագոյնս զեկուցելով՝ 1877 թուի ապրիլի 18-ին թագաւոր կայսրը Յովնանեանցների այդ կալուածքը հաստատում է յանուն Թիֆլիսի ս. Ստեփանոս անապատի: Իսկ կաթողիկոսը 1877 թուի սեպտեմբերի 22-ին տալիս է դպրոցի բացման կոնդակը, որի մէջ ի միջի այլոց ասուած է. «ուսումնարանդ այդ կառուցի ի Տիֆլիս քաղաքի ընդ հովանեաւ կուսաստանի Հայոց և ընդ անընդմէջ հսկողութեամբ պարկեշտասուն տիրանուէր կուսանաց և պատսպարելոց ի դմին»:

Այնուհետև 1887 թուին նոյն ճանապարհով ուսումնարանի պահպանման համար Յովնանեանցները կտակում են կրկին Թիֆլիսի կուսանոցի անունով, Թիֆլիսում Սիօնի փողոցում գտնուած իրենց մեծ քարուանասարան, որի ե-

կամուտից տարեկան 300 ուրբլի յատկացուած է կուսանոցին:

Այսպիսով Յովնանեան Դպրոցի շէնքը իր ազատ հողաբաժնով և քարուանասարան համարուում է կուսանաց մենաստանի սեպհականութիւն: Բացի դրանից կտակի զօրութեամբ կուսանոցի մայրապետը Յովնանեան ուսումնարանի հոգաբարձութեան անդամ է ձայնի իրաւունքով: Դպրոցը բացուեց Կատարինէ իշխ. Արղութեանի մայրապետութեան օրօք և այդ օրուանից մայրապետները մասնակցում են դպրոցի կառավարութեան գործում: Միաբան քոյրերն էլ անցեալներում եղել են ձեռագործի դասատու առանց վարձատրութեան:

## Ն. ԶՈՒՂԱՅԻ ՀԱՅՈՑ Ս. ԿԱՏԱՐԻՆԷ ԿՈՒՍՏԱՆՈՑ:

Քանի որ ս. Կատարինէի կուսանոցն եղել է սկզբնապատճառ, մայր և «ղայեակ» Թիֆլիսի ս. Ստեփանոս կուսանաց անապատի՝ հարկաւոր ենք համարում ընթերցողներին տեղեկութիւն տալ նաև Ն. Զուղայի հայոց այդ կուսանոցի մասին: Ս. Կատարինէի կուսանոցը Թիֆլիսի կուսանոցից մի դար առաջ է հիմնուել:

Ինչպէս երևում է Ն. Զուղայի կուսանոցի եկեղեցու պատի արձանագրութիւնից այս անապատը շինուել է 1623 թուին հայոց ՌՀԲ թուին բարեպաշտ Խօջայ Եղիազարի ջանքով և ծախքով: Այս Խօջայ Եղիազարը Լազարեան իշխանական տոհմի նախահայր Եղիազար իշխանի պապն է: Ինչպէս որ Թիֆլիսի ս. Ստեփանոս կուսանոցի հիմնադիր և հովանաւոր եղել են Բեհբութեանց իշխանները, այնպէս էլ ս. Կատարինէ կուսանոցի հիմնադիրն ու հովանաւորն եղել են Լազարեան իշխանները: Աւանդաբար պատմւում է, որ առաջին միաբան քոյրերը այս մենաստա-

նի եղել են Հայաստանից գաղթականների հետ  
եկած Ուուուքսանա մայրապետը իր 2 Թագուհի  
և Հռիփսիմէ ընկերներով: Այդ կոյսերը հետը  
բերել են ս. Կատարինէի (որի անունով և կա-  
ռուցուել է վանքը), ս. Հռիփսիմէ կուսի և ս.  
Յովհաննու Կարապետի մասունքները, որոնք մին-  
չև այժմ պահուում են այդ մենաստանում:

Ս. Կատարինէի կուսանոցը 1702 թուին ու-  
նեցել է 33 միաբան քոյրեր, հետզհետէ պակա-  
սել, այժմ 10—12 կոյսեր կան:

Գայիանէ մայրապետի ժամանակ, երբ Ն.  
Ջուղայի կուսանոցի մայրապետն ու միաբան  
քոյրերը այնտեղի նոր առաջնորդ Թագէոս արք-  
եպիսկոպոսից տեղեկանում են Թիֆլիսի կուսա-  
նոցի մասին զովասանք, նրանց բարեկարգ վի-  
ճակի և կարգ ու կանոնի մասին, ս. Կատարինէի  
մայրապետ Եղիսաբէթ Մարտիրոսեանցը գրաւոր  
դիմում է Գայիանէ մայրապետին և խնդրում,  
որ իրենց վանքի կարգ ու կանոնի ու սովորու-  
թիւնների մասին տեղեկացնէ, որպէսզի իրենց  
վանքն էլ բարեկարգէ: Գայիանէին ուղարկում  
է և իրենց կոյսերի պատրաստած ձեռագործ  
նուէրներ: Գայիանէ մայրապետն էլ այդ առ-  
թիւ մի երկար գրութեամբ պատասխանելով  
տեղեկութիւն է տալիս իրենց մենաստանի հիմ-  
նարկութեան և ներկայ դրութեան մասին:

Այդ գրութիւնը պարունակելով հետաքրքիր  
տեղեկութիւններ Թիֆլիսի կուսանոցի մասին՝  
դնում ենք ստորև:



Թեֆլիսի հայոց կուսանոցի մկաբանութիւնը 20 տարի առաջ.



Պարկեզասուն Մայրապետի եւ արգարամիս կուսանաց  
սուրբ Կասարիներ կուսանոցին նոր Զուղայու հոգեհա-  
րագաս քերց 'ի Քրիստոս:

ողջոյն


Անագան եւ կարի անագան եհաս 'ի ձեռս  
իմ պատուական նամակ սրբազումար միաբա-  
նութեանդ՝ գրեալ 'ի 15-ն օգոստոսի անցելոյ  
ամի ընդ գովելի ձեռագործաց յիշատակելոց 'ի  
նոյն նամակի, ուստի եւ յամեցումն փոխադարձի  
գրութեան Զերոյ գրեսցի 'ի յանցանս զիպաց  
ժամանակի:

Եթէ հեռացեալ եմք յաշխարհէ ըստ իսկա-  
կան կոչման մերոյ վայել է, մանաւանդ թէ  
պարտք են մեզ հեռանալ եւ յաշխարհային շողո-  
քորթութեանց, եւ բանք մեր առանց աւելորդ  
պաճուճանաց պարտին լինել, այո՛ն այո՛, եւ ոչն  
ոչ, եւ ահա ես եւ միաբանակից քորք իմ պարզա-  
բար ասեմք, զի ընթերցեալ զցանկալի նամակ  
հեռացելոյ 'ի մէնջ տեղեալ, այլ մերձ եղելոցդ  
հոգևով բերկրացաք յոյժ յոյժ, եւ փառս վեր-  
առաքեցաք վերնախնամ Տեսչութեանն, որ ետ  
մեզ առիթ լսելոյ եւ ընթեռնելոյ 'ի զիր զորպի-  
սութենէ սրբասնունդ միաբանութեանդ, որ մայր  
եւ դայեակ համարի մերում կուսանոցի, որպէս  
տեսցի 'ի ստորեւ:

Գովութիւնն, զոր տուեալ է առաքելա-


Հնորն Աբրեպլեակոպտոսն Թագէոս մերում միաբանութեան, կարի գերագանցէ գմերով արժանաւորութեամբ. երանի թէ միում 'ի բազմաց անտի շատագոյութեանց լինէաք արժանի, այլ վսեմախոն միտք նորա ցանկալով առնել զՁեզ և զմեզ քաջանանգէս յասպարիզի կրօնաւորութեան մերում, ըստ առաքելական շաւղաց նախանձեցուցանէ զՁեզ զբարօք նախանձն, և զմեզ կերպիւ իմն խրախուսէ լինիլ նախանձելի. իցէ թէ կատարեսցին բողձանք սուրբ կամաց նորա, և յերկոցունցս դիմաց իցէ թէ արժանի լիցուք առնել զամենայն ըստ կամաց Տեառն մերոյ և յայնժամ իսկ ասել «Ծառայք անպիտան էաք, զոր պարտն էր առնել արարաք»:

Առ 'ի ընդ զգովելի փափագ սրտի սրբանունդ քերցդ ցանկալի և կարի ցանկալի էր ինձ գրել սճով իմն զհիմնարկութենէ մերում կուսատանի, զփոփոխութեանց, զանցից և զայլոց կարևորաց դիպելոց նմին մինչև ցմեր աւուրս, այլ աւանդ զի 'ի լրումն այսպիսի բարի ցանկութեան Ձերոյ և այլոց բազմաց պակասին հաւատարիմ փաստք, քանզի 'ի ժամանակի աւերման քաղաքիս յանօրէն բռնաւորէն Աղայ Մահմեդ-խանէ, 'ի ցաքուցրիւ փախստական լինիլ ընդ բոլոր բնակչաց քաղաքիս և կուսակրօն միաբանութեան մերում 'ի վայրս օտարօտիս, ընդ անդարձ գերութեան սրբանգան անօթաց և եկեղեցական զարդուց մատնեցան 'ի կորուստ և մատեանք յիշատակաց և մուրհակք և պարգևագիրք և այլ թուղթք անապատի մերոյ, և ցայսօր ժամա-



Նշարթիւտումով Խիճից, ցնացաւի հոհոց լուրթիթ

*[Faint, illegible text at the top of the page]*



*[Vertical text on the left margin, likely bleed-through from the reverse side]*

*[Faint, illegible text at the bottom of the page]*

նակի ամենայն հետազօտութիւնք մեր ելեալ են 'ի դերև: Բայց առ 'ի ընդ զտենչանս սրտի Ձերոյ անաւասիկ ոչ ձանձրանամ դրոշմել 'ի զիր ընդ այժմեան վիճակի մերում կուսաստանի և զանցելոցն տեղեկութիւնս, զորս 'ի հատուկսոր թղթոց և յաւանդութեանց որդի 'ի հօրէ ընկալեալ եմք:

Առաջին. Իբրու հարիւր յիսուն ամօք յառաջ նախահան իմ Մելիք Աշխարբեկ Բէհբուզեանց չգիտեմ 'ի լինելն իւր 'ի Պարսկաստան ականատես եղեալ, թէ 'ի լրոյ իմացեալ զբարեկարգ վարուց կուսանոցին Նոր Ջուղայու ցանկացեալ է և ինքն կարգել 'ի Տփխիս զկարգ աղօթաւոր կուսանաց, այլ յամին 1727 'ի տիրապետութեան Օսմանեանց 'ի վերայ Տփխիսայ նահատակեալ նորա մարտիրոսական մահուամբ, եթող զկատարումն ցանկութեան սրտին իւրոց ժառանգաց, հարազատ որդի նորին և երիցագոյնն 'ի տոհմին Բեհբուզեան Մելիք Աղան, որ ընդ Նատր Շահին նուաճեաց ցեղերս Ինդոսի, 'ի կատարումն բարի ցանկութեան հօր իւրոյ հրաւիրեալ է 'ի Ջուղայէ զերկուս կուսանս և կարգեալ 'ի տան իւրում զառանձին աղօթանոց սահմանեալ է զկարգ կուսանաց, և ընդ յաւելուլ թուոյ կուսանաց և 'ի դոյզն ինչ անդորրանալ Վրաստանի իշխանագուն Բեհբուզեանք 'ի թիկանց կողմանէ տան իւրեանց 'ի վերայ սեպհական գետնի իւրեանց կառուցեալ են զեկեղեցի յանուն նախավկային Ստեփաննոսի և առ նովաւ զսենեակս, ուր և տեղափոխեալ են

զկուսանան նուիրելով 'ի սեպհականութենէ իւրեանց զկրպակս, զեկեղեցական անօթս և զայլ կարևոր պէտս: Թիւք կուսանաց մերում Կուսաստանի 'ի հնումն, որպէս և այժմ ըստ դիպաց, է զի առաւելեալ են և է զի նուազեալ, միայն յաւուրս վերջին աւերածոյ քաղաքիս եղեալ են այնոքիկ քսան և եօթնիւ չափ: Ահաւասիկ, քորք իմ պատուականք, այսչափ և եթ մարթացայ ծանուցանել զայսմ կարևոր խնդրոյ, զմնացեալսն թողլով ժամանակին յաջողութեան, մինչև յաջողկոտ ձեռք ժամանակին, որք մատնեցին զհնութիւնսն յիշատակաց մերոց'ի կորուստ, քաղցրացեն յերևան հանել զայնոսիկ ցանկալի հոգւոց մերոց զգանձս. դարցձուք այժմ առ այժմեան վիճակ մերում Կուսաստանի:

Երկրորդ՝ որպէս 'ի վեր անդր գրեցի անպատն մեր կառուցեալ է 'ի Հարաւային կողմն քաղաքիս առ ստորտով Սօլօլակ անուանեալ լերին 'ի թիկանց կողմանէ տանն երից հարազատ իշխանաց Վասլի, Գրիգորի և Դաւթի իմոց հարազատ և սիրելի եղբարց 'ի թաղին անուանելոյ Բէհբուզեանց, անպատ 'ի չորից կողմանց պատեալ է պաղսպաւ ունելով զդուռն մի առ ճանապարհաւ. Բեգդէհէմ եկեղեցւոյ և զառանձին դուռն, որ ելանէ 'ի գաւիթ յիշատակեալ իշխանաց, եկեղեցին կառուցեալ յանուն սրբոյ Ստեփաննոսի, (որոյ և մասն նշխարաց պահի 'ի նմին ընդ այլոց մասանց) շինեալ է սագաձև 'ի հիմանց'ի գլուխն քարուկիր ունելով զփոքրիկ զանգակատուն զմբէթարդ, դիրք եկե-

ղեցւոյն չէ՛ ինչ մեծ և փառաւոր, այլ այնչափ և եթ, որչափ ներէր ժամանակն և տեղին. յարեմտեան կողմանէ եկեղեցւոյն կառուցեալ էին սենեակք 'ի բնակութիւն կուսանաց, խոհանոցն, ամբարանոցն և այլն որք ըստ ձախողութեան ժամանակին շինեալ էին, այնչափ նեղ և անձուկ, զի առաւել բերէին գնմանութիւնն հիւղից մրգապահաց, քան բնակութեան մարդկան, և չէր ինչ մեզ հրաժարելոցս յաշխարհային վայելչութեանց անցուցանել զաւուրս մեր 'ի նոսին, այլ զի այսօքիկ հնացեալ մերձ էին 'ի կործանումն, և յաչս մերոց մանաւանդ բազմազգի և բազմալեզու օտար ազանց նախատական իմն էր հակառակ այժմեան անդորրութեան ընդ օրհնաբանեալ տէրութեամբ Ռուսաց և վայելչութեան կողմանցս քաղաքիս այնպիսի բնակութիւն, ուստի յայսմ ամի վերակացութեամբ վերատեսչի բարեկարգութեան եկեղեցեաց Հայոց Տփխիսայ Ղազար աւագ քահանայի Դաւթան քանդեալ 'ի հիմանց և ընդարձակեալ զտեղին քարահատութեամբ 'ի կողմանէ լերինն կառուցաք 'ի նորոյ զվայելուչ սենեակս ըստ եւրոպիական տարազու ըստ ձևոյն գծագրելոյ 'ի քաղաքական իշխանութենէ, յորս և բնակիմք արդէն: Իսկ 'ի վայելուչ նորոգ շինութիւն եկեղեցւոյն ձեռնարկցուք Աստուծով յառաջիկայ ամի: Դուք, քորք իմ պատուականք, աղաչեցէք զտէր յաջողել զգործս ձեռաց մերոց, իսկ վասն իմ առանձին, տեսանել զլրումն շինութեան սրբոյ տաճարիս և ապա վճարեալ համարելով վասն իմ գամենայն ցան-

կութիւն սրտիս երթալ առ Արարիչն իմ տալ  
զհամար տնտեսութեանս, ոչ ըստ իւրումն ար-  
դարութեան այլ ըստ մարդասէր գթութեան:

Երրորդ՝ ՚ի պաշտել զկարգ պաշտաման եկե-  
ղեցւոյ և ՚ի մատուցանել զսրբագան խորհուրդ  
պատարագի երկիցս յեօթնեկի և յաւուր հանդի-  
սաւոր տօնից նշանակի ՚ի թեմակալ առաջնորդէ  
վիճակիս ոմն ՚ի բարերարոյ քահանայից ըստ  
մերում ցանկութեան, իսկ զպաշտօն սարկաւագի  
և դպրի կատարեմք ինքնին:

Չորրորդ՝ ՚ի միաբանութիւն վանացս ընկա-  
լեալ լինին օրիորդք ոչ կարի մանկահասակք և  
ոչ անցեալք զաւուրբք, իսկ այրիք ոչ բնաւ, օ-  
րիորդք ցանկացօղք մտանել ՚ի կարգ կուսանաց  
պարտին վկայեալ լինիլ ըստ բարի վարուց և  
գիտել գոնէ զհասարակ հայերէն ընթերցումն,  
ցանկացօղն մտանել ՚ի կարգ կուսանաց միա-  
բանութեանս ոչ իսկոյն կոչի յոր և իցէ աստի-  
ճան, այլ կարգեալ ՚ի թիւս ունկնդրաց պարա-  
պին յաղօթս և յուսումն հայերէն ընթերցանու-  
թեան, եկեղեցական արարողութեանց և ՚ի նշա-  
նակեալ ժամս ՚ի ձեռագործս, մինչև ՚ի փորձա-  
ռութեան քանի մի ամաց ինքնին ՚ի չափ կա-  
տարելութեան հասեալ ընտրեսցէ, թէ կարող է  
արդեօք բառնալ զլուծ գինուորութեան Քրիստո-  
սի ցօր վախճանի կենաց իւրոց, ՚ի լրանալ ժա-  
մանակի փորձոյ, եթէ մնայ նա ըստ ազատ կա-  
մաց յիւրումն ընտրութեան և միաբանութիւն վա-  
նացս ըստ միաձայն խորհրդոյ արժանի վարկանի  
զնա ընդունելոյ ՚ի կարգ միաբանից յայտնէ

գայսմանէ վիճակաւոր առաջնորդին, և կարգի 'ի թիւս միաբանից, ծնօղք՝ ազգականք կամ հոգաբարձուք օրիորդին նուիրելոյ զանձն 'ի կուսութիւնս պարտական են ըստ իւրեանցն կարողութեան մատուցանել 'ի կուսանոցն զօժիտն՝ զորս տալոց էին 'ի հարսնացուցանել զնա աշխարհի, այս գումար միանայ ընդ գումարաց վանացն և զկնի վախճանի կուսին և ոչ դառնայ առ ծնօղք կամ առ ազգականս նորա: Հանդերձք, ուտեստ և այլ կարևոր պէտք կուսանաց յօրէ մտից նոցա յանապատն ցօր վախճանի նոցա տնտեսին 'ի գումարաց վանացս ըստ տնօրէնութեան մայրապետին և երկուց գործակցաց նորին ընտրելոց 'ի կուսանաց և հաստատելոց 'ի վիճակաւոր առաջնորդէն, վասն ամենայն արդեանց և ծախուց կուսանոցին յամի յամի տուեալ լինի 'ի վիճակային իշխանութենէ կնքեալ և երիզապնդեալ մատեան, ուր գրին ամենայն մուտք և ելք գիտութեամբ մայրապետին և երկուց գործակցաց նորին, և 'ի վախճան տարւոյն այնոքիկ հաշուական մատեանք առաքին առ հոգևոր վիճակային իշխանութիւնն 'ի վերագննութիւնս: Մի սեղան է բոլոր միաբանութեան վանացս մեծաց և փոքունց և միատեսակ զգեստ, 'ի միասին ննջեն և 'ի միասին յառնեն, մի կամք են ամենեցուն և միատեսակ խորհուրդ, ստորագասութիւն ճշդիւ պահպանի 'ի կուսանոցիս, առանց գիտութեան և հրամանի մայրապետին ոչ կարէ ելանել ոք 'ի միաբանից ընդ դուռն վանացս և ոչ ձեռնարկել 'ի գործ ինչ, որ չէ հրամայեալ նմա,

նչ ոք 'ի միաբանից առանց դիտութեան մայրապետին կարէ զրել առ ոք զնամակ, թէ և առ մերձաւոր ազգականս, և ոչ յուժեքէ ընդունել զայն: Եթէ ոք գտցի անհնազանդ կարգի և կանոնաց վանացս յետ միանգամ և երկիցս խրատելոյ, եթէ ստահակեսցի զրկի 'ի կարգէ միաբանութեանս և օժիտն նորա դարձուցանի յետս իբրև անարժան մտանելոյ 'ի գանձարան ուխտիս:

Հինգերորդ՝ պարապուստն մեր հոգևոր կատարի այսպէս՝ յառաւօտուն վաղքաջ ընդ առաւօտըն 'ի ձայն զանգակաց յարուցեալ ամենեցուն զկնի դոյզն ինչ մտածական աղօթից կամ սաղմոսելոյ ժողովին յեկեղեցին, ուր սկսանի կարգ գիշերապաշտպան մինչև ցճաշու ժամն և ապա ելեալ երթան յիւրաքանչիւր սենեակս կամ 'ի պաշտամունս նշանակեալս 'ի մայրապետէն, 'ի 10 ժամու կրկին ժողովին յեկեղեցին և կատարեալ զպաշտօն ժամերգութեան ճաշու և 'ի նշանակեալ աւուրս առաջիկայ սպասաւոր զրտեալ զենման անմահ գառին երկնաւորի ելանեն յեկեղեցւոյն և ժողովին 'ի սեղանատուն, ուր օրհնութեամբ մայրապետին վայելեն զսեղան ոչ շոռայ, և ապա երթան յիւրաքանչիւր պաշտօն: Յերեկոյեան պահու ժողովեալ յեկեղեցին կատարեն զերեկոյին աղօթս և զկարգ հանգստեան: Յուրիս ժամու նստին 'ի սակաւաքանակ ընթրիս, յետ այնորիկ ժողովեալ յեկեղեցին ասեն «Եկեսցեն իւր սարօք» և զաւուրն ձայնի մի կանոն սաղմոսն ընդ 'ի նեղու

թեան կանոնին, և ապա երթեալ 'ի սենեակս, որք կամինն նջենն, և որք կամին պարապեն ցժամս ինչ յաղօթս և յընթերցումն գրոց:

Վեցերորդ՝ որպէս Ձերդ բարեկիրթ միաբանութեան նոյնպէս և մեզ ձեռագործն չէ օտար, ըստ որում մարգարէական է ձայնն «զվաստակս ձեռաց քոց կերիցես, երանի է քեզ և բարի եղիցի» և առաքեալն պարծանօք իմն ասէր «զպէտըս իմ և որոց ընդիսն էին պաշտէին ձեռքս այս» և զի 'ի դատարկ պարապոյ ծնանին անթիւ չարիք, ևս առաւել զգուելի բամբասանք, այլ երանի թէ, պարապումն 'ի ձեռագործս ոչ խափան լիցի 'ի հոգևորսն պարապման. ձեռագործք մեր են ոսկեթել, մարգարտայեռ պատուական ասդնեգործութիւնք կամ հիւսուածք վասն եկեղեցական զարդուց ևս և մետաքսեայ նրբաման գործուածք 'ի զանազան պէտս, ոչ այնչափ 'ի հայթայթել նոքօք զգրամս, որչափ 'ի պճնագարդել զեկեղեցիս և յընծայ երախտաւորաց և բարերարաց կուսանոցիս:

Եօթներորդ՝ այցելութիւն և մխիթարութիւն սգաւոր կանանց քաղաքիս մի է 'ի գլխաւոր պարտաւորութեանց միաբանութեանս, քանզի 'ի տան ուրուք երբ մեռանի ոք, եթէ կամին ազգականք մեռելոյն ազգ առնեն զայսմանէ Մայրապետի վանացս, և յայնժամ նա նշանակէ զերկուս կամ զերիս 'ի կուսանաց երթալ յայցելութիւն այնր զերդաստանի, նշանակեալ կուսանքն յերեկոյին՝ յորում լուսանայ օր թաղման հանգուցելոյն երթան 'ի տուն նորին, նստին

առ վայր մի առ սգաւորս և սփոփեն զնոսա հոգեկան խրատու., և ապա կատարեն 'ի վերայ հանգուցելոյն զկարգ հանգստեան և քաղեալ զամբիժն դառնան 'ի վանս, 'ի միւսուսն առաւօտու կրկին երթան 'ի տուն հանգուցելոյն և ըստ առաջնուսն սկսանին մխիթարական բանիւք սփոփել զսգաւորսն. իսկ յորժամ դասք հոգևորականաց տանեն զննջեցեալն յեկեղեցի, յայժամ և կուսանք առաջնորդեն սգաւոր կանանց յեկեղեցի: Յետ աւարտելոյ պատարագին և կարգի հանգստեան և յուղարկաւորելոյ զհանգուցեալն առաջնորդութեամբ կուսանաց և սգաւորքն դառնան 'ի տուն, նոյնպէս առաջնորդութեամբ կուսանաց զնան սգաւորք յերկրորդում աւուր թաղման հանգուցելոյն յեկեղեցին և դառնան 'ի տուն:

Ութերորդ՝ անտերունջ որբ աղջկունք ոմանք եթէ 'ի սպառ մնան անխնամ գտանեն ինքեանց ժամանակաւոր ապաստանարան 'ի վանս կուսանաց, յորոց ոմանք 'ի մտանելն յամուսնութիւն ընդունին 'ի կուսանոցէն և զչափաւոր զօժիտ:

Իններորդ՝ եկամուտք վանացս գոյանան, ա. 'ի գումարաց զորս ընծայեն ծնողք կամ ազգականք կուսանաց 'ի մտանել նոցա 'ի միաբանութիւն ուխտիս. բ. 'ի վարձուց կրպակաց և այգեաց, զորոց զեկամուտս պարգևեալ են իշխանք Բէհբուղեանք 'ի պէտս տաճարի անապատին կուսանաց ցորչափ մնայ շէն նոյն անապատ. գ. 'ի վաճառոց մոմոց յեկեղեցուջ վանացս և 'ի խաչահամբուրէ: դ. 'ի կամաւոր նուրի-

րանաց, գորս շնորհեն հրաւիրողքն զկուսանս  
յայցելութիւն սգաւորաց. ե. 'ի կամաւոր ընծա-  
յարբերութենէ բարեպաշտից առ ձեռն կամ կտա-  
կաւ աւանդութեամբ. գ. 'ի տրոց իշխանաւորաց  
յորոց տունս երթան կուսանք 'ի գիշերի ճրա-  
գալուցի ծննդեան Տեառն յերգել զաւետիս: Եւ  
տասներորդ 'ի հիւանդանալ ուրուք 'ի միաբանից,  
որչափ և երկարատե իցէ ախան ընդունի զպահ-  
պանութիւն յընկերաց իւրոց իբրև 'ի հարազատ  
քերց և 'ի գործ դնին ամենայն հնարք վասն ա-  
ռողջութեան նորին, իսկ 'ի վախճանիլ նորա ըստ  
սովորութեան քաղաքիս վայելուչ հանդիսիւ ծա-  
խուք վանացն առանց իրիք ծանրաբեռնութեան  
ծնողաց կամ ազգականաց հանգուցելոյն կատա-  
րի յուղարկաւորութիւնն»:

Նոր Զուղայի և Սպահանի առաջնորդ Թա-  
ղէոս արքեպիսկոպոսը Թիֆլիսի կուսանոցի ձե-  
ւով այստեղ էլ արժանաւոր կոյսերին տալիս է  
սարկաւազութեան աստիճան. տալիս է հրա-  
հանգ—կանոններ ներքին կառավարութեան հա-  
մար. այդ կանոններով երկար ժամանակ կառա-  
վարուելիս են եղել մինչև 1901 թիւը, երբ թե-  
մի կառավարիչ Բագրատ վարդապետ Վարդա-  
գարեանցը մշակում և տալիս է կանոններ, ո-  
րոնցով կառավարում է և ներկայումս ս. կա-  
տարինէի կուսանոցը, ինչպէս երևում է այդ  
կանոններից Ն. Զուղայի թեմական իշխանու-  
թիւնը կառավարում է այդ մենաստանը առան-  
ձին ընտրուած վարչութեան միջոցով:

## Կ Ա Ն Ո Ն Ք

Ս. ԿԱՏԱՐԻՆԵԱՆ ՄԵՆԱՍՏԱՆԻ ՆՈՐ—ՋՈՒՂԱՅՈՒ

- Ա. Ս. Կատարինեան Մենաստանն Կուսանաց գտանի ընդ անմիջական իրաւասութեամբ Հոգևոր Թեմական Իշխանութեան:
- Բ. Մենաստանն կառավարի ի ձեռն Վարչական մարմնոյ, որ կոչի «Կառավարութիւն Ս. Կատարինեան Մենաստանին Կուսանաց», որոյ Անդամք լինելոց են փորձառու Քահանայք՝ որոշմամբ Թեմական Առաջնորդի կամ Փոխանորդի նորին:
- Գ. Կառավարութիւն Մենաստանին յամենայն Շաբաթ աւուր պարտ է ունիլ զնիստ ի Մենաստանի վասն բարեկարգելոյ և կանոնաւորելոյ զներքին կեանս և զտնտեսական վիճակ Մենաստանին:
- Դ. Մին յԱնգամոց Կառավարութեան Մենաստանին լիցի Գանձապահ որոշմամբ Թեմական Հոգևոր Իշխանութեան: ԵԱռաջնորդական Խորհրդարանէ տացցի նմա ժապաւիտեալ մատեան վասն արձանագրելոյ կանոնաւորապէս զել — և — Մուտս Մենաստանին:
- Ե. Կառավարութիւն Մենաստանին պարտ է հսկել աշալուրջ ի վերայ կալուածոց, եկամտից և ծախուց Մենաստանին. ոչ կարէ երբէք վաճառել կամ զնել ի զբաւ զկա-

լուածս, այլ յետ յայտարարելոյ յԱռաջնորդական Խորհրդարանէ ի գիտութիւն հասարակութեան, կարէ տալ ի վարձու:

Զ. Կառավարութիւն Մենաստանին կարէ տալ զպատրաստի դրամս ի պարտս և կամ առնուլ յայլոց՝ թոյլատուութեամբ Թեմակալ Առաջնորդի, Փոխանորդի կամ Առաջնորդական Խորհրդարանի:

Է. Երկուքն ի Կուսանաց նշանակին ի պաշտօն ծախսարար — տնտեսուհւոյ հրամանաւ Թեմակալ Առաջնորդի: Իոքա պարտին գործել զգիտութեամբ և համաձայնութեամբ Կառավարութեան Մենաստանին և Մայրապետի:

Ը. Ծախսարար — Տնտեսուհիք յամենայն Շաբաթ աւուր ներկայացուցեն Անդամոց Կառավարութեան Մենաստանին զմանրամասն հաշիւս ծախուց ի ներկայութեան Մայրապետի և ամենայն Կուսանաց:

Թ. Կառավարութիւն Մենաստանին պարտ է ի սկիզբն իւրաքանչիւր ամսոց քննել զմուտըս և զելս նախորդ ամսոյ և վաւերացուցանել:

Ժ. Նոյն Կառավարութիւն ի սկիզբն իւրաքանչիւր ամի պարտ է առաջի առնել Ատենի Թեմական Իշխանութեան զամենայն հաշուեմատեանս, զմուրհակս և զցուցակ կալուածոց, վարձակալաց և վարձուց նախորդ ամի քննութիւն և ի տպագրութիւն:

ԺԱ. Կուսանք և կուսացուք պարտական են

հնազանդել Մենաստանական խիստ կարգաց  
և կանոնաց: Ոչ ոք ի նոցանէ առանց թոյլ-  
տուութեան Մայրապետի կարէ ելանել ի  
Մենաստանէ և զնալ առ ազգականս կամ  
ծանօթս իւր:

Մանօթ.— Որք դասատու են յՕրիորդաց Դըպ-  
րոցի, յետ աւարտելոյ զդասատուութիւն՝ փութով  
պարտ են վերադառնալ ի Մենաստան:

ԺԲ. Ամենեքեան պարտական են կանոնաւո-  
րապէս ներկայ գտանիլ յՆկեղեցւոջ ի ժամ  
աղօթից ժամերգութեան:

ԺԳ. յԱմենեցունց պահանջի Հնազանդութիւն  
հրամանաց և կարգադրութեանց Կառավա-  
րութեան Մենաստանին և Մայրապետի  
Կուսանաց:

ԺԴ. Մայրապետն Կուսանաց պարտական է  
արթնութեամբ հսկել ի վերայ բարուց և  
սովորութեանց Կուսանաց և կուսացուաց և  
ի վերայ կանոնաւորութեան ժամերգու-  
թեան: Զանուղայս խրատեսցէ և յանդի-  
մանեսցէ: Եթէ յետ երկրորդ նկատողու-  
թեան ոչ գայցէ յուղղութիւն՝ Մայրապետն  
պարտ է յայտնել զայսմանէ Կառավարու-  
թեան Մենաստանին:

Յետ զգուշացուցանելոյ և յանդիմանելոյ  
եթէ անուղղայն կրկին ոչ գայցէ յուղղու-  
թիւն՝ Կառավարութիւն Մենաստանին պար-  
տաւոր է զեկուցանել Թեմակալ Առաջորդի  
կամ Փոխանորդի նորին՝ զամենայն յան-  
ցանս կուսի կամ կուսացուի. Թեմակալ Ա-

ուջնորդն որոշեսցէ զտեսակ պատժոց, այն է՝ Եկեղեցական ապաշխարանք (վասն կուսանաց և կուսացուաց) զրկել յուրարակրութենէ ժամանակաւորապէս կամ իսպառ (վասն կուսանաց) և հեռացուցանել իսպառ ի Մենաստանէ, (վասն կուսանաց և կուսացուաց) :

ԺԵ. Կուսանք պարտին աշխատել վասն նրպաստելոյ գործունէութեան Բարեգործական Ընկերութեան Հայուհեաց Նոր—Ձուղայի, որ հոգայ զպէտս և զկարիս որբ և չքաւոր աշակերտուհեաց, տալով այսպիսեաց զօժանդակութիւն վասն կրթելոյ և դաստիարակելոյ յԱզգային Օրիորդաց Ուսումնարանի:

Այդ կողմից Թիֆլիսի կուսանոցը կարող է նախանձել, որ մինչև օրս չունի թէ կառավարութեան և թէ ներքին կեանքի համար հրահանգ կանոններ: Բացի դորանից ս. Կատարինէի մենաստանն ունի որբանոց, ուր ներկայումս 15--20-ի չափ գիշերօթիկ որբեր են ինսամուտմ. այդ որբանոցում դասատու են ձեռնհաս միաբան կոյսեր: Ունին գորգագործութեան արհեստանոց, ուր 20-ի չափ աշակերտուհիներ պարապում են գորգագործութեամբ: Նոր—Ձուղայի Հայուհեաց Բարեգործական Ընկերութիւնն իր ուսումնարանը ներկայումս տեղաւորել է ս. Կատարինէի կուսանոցում. այդ ուսումնարանում պատրաս-

տում են զանազան զարդանկարներ, հիւսուածքներ, ծաղկանկարներ և այլն ձեռագործներ յօգուտ ընկերութեան: Մի խօսքով նոր — Ջուղայի հայոց կուսանոցը մի քանի բաներով բարձր է կանգնած և ցանկալի է, որ Թիֆլիսի կուսանոցըն էլ աչքի ընկնի հասարակութեան օգտակար իր ձեռնարկութիւններով:

Վ Ր Ի Պ Ա Կ

Տպարանի սրբագրիչի անփութութեան պատ-  
ճառով մի քանի տեղ թախիբանց բառի տեղ  
տպուած է թայրեանց և Գայիանէ բառի տեղ  
էլ Գայանէ, որ և խնդրում է ուղղել

Հեղինակը՝



2000

